

«ՀԵՌԱՓՈԽԵԼՈՎ ՔԱՂԱՔԸ. ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏԱՆԿՅՈՒՆ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՄՓՈՓԱԳՐԵՐԸ

1-ին նիստ. Բաժանված քաղաք.....	2
2-րդ նիստ. Քաղաքային լանդշաֆտ.....	5
3-րդ նիստ. Գյումրի.կերպար և պատում.....	10
4-րդ նիստ. Հիշելով քաղաքը.....	13
5-րդ նիստ. Քաղաքային տեղանվանաբանություն՝ պաշտոնական եվ ոչ-պաշտոնական	17
6-րդ նիստ. Քաղաքի կերպարը.....	20
7-րդ նիստ. Քաղաքը պատերազմի ժամանակ	24
8-րդ նիստ. Քաղաքը և կրոնը	27
9-րդ նիստ. Հետարդյունաբերական քաղաք	30
10-րդ նիստ. Քաղաքը առօրյայում.....	33
11-րդ նիստ. Երաժշտությունը քաղաքում.....	37
12-րդ նիստ. Քաղաքային (պոստ)ֆոլկլոր	40

1-ԻՆ ՆԻՍՏ. ԲԱԺԱՆՎԱԾ ՔԱՂԱՔ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ՍՅՈՒՉԱՆ ՖԵԼԻՆԳՍ

Մյուզան Ֆելինգար սոցիալական և մշակութային մարդաբան է, որն աշխատում է Ֆրանկֆուրտի Գյոթեի անվան համալսարանի Մշակութային մարդաբանության հետազոտությունների ինստիտուտում: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում են տնտեսական և քաղաքային մարդաբանական ուսումնասիրությունները Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում, ինչպես նաև առևտրային կապերը Չինաստանի հետ: Նա դաշտային աշխատանք է կատարել Ղրղզստանում, Ղրիմում, Հայաստանում, Վրաստանում և Չինաստանում: Ներկայումս նա Volkswagen հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Ոչ ֆորմալ շուկաներ և առևտուր Կենտրոնական Ասիայում և Կովկասում» հետազոտական նախագծի ղեկավարն է:

ՆԻՆՈ ԱՅՎԱԶԻՇՎԻԼԻ ԳԵՆԵ

Նինո Այվազիշվիլի Գենեն սոցիալական մարդաբանության դոկտոր է Հալլե-Վիտենբերգի Մարտին Լյութեր համալսարանում (Գերմանիա) և Վիեննայի Փոխակերպումների պատմության հետազոտական կենտրոնի (RECET) գիտաշխատող: Նա հրատարակել է քաղաքացիության, սահմանների, ազգային պատկանելության, հասարակական և կրոնական արարողությունների թեմաներով աշխատություններ: Այվազիշվիլի Գենեն իր ընթացիկ՝ «Գերմանիայում (Օսնաբրուկ) «լավ կյանքի» փնտրություններով» նախագծում ուսումնասիրում է Գերմանիայում նախկին ԽՍՀՄ-ից միգրանտների հանրային ընկալումը և դրա հետևանքները: Ուշադրության կենտրոնում են միգրանտների սեփական օրակարգը և սկստիվ գործողությունները:

«ԼԱՎ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՆ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԵՏԵՈՐՀՐԳԱՅԻՆ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԸ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Հարևանություն տերմինը վերաբերում է ոչ միայն մարդկանց, այլ նաև հարևան տարածքին՝ տներին, բակերին և բաց դռներին: Դա այն տարածքն է, որտեղ մարդն իրեն զգում է սոցիալապես և բարոյապես ապահով: Լավ հարևաններ ունենալը հաճախ «լավ կյանքի» բանալին է: Հատկապես, երբ խոսքը միգրացիայից հետո ամբողջովին օտար միջավայրում վերակողմնորոշվելու մասին է: Հիմնվելով սոցիալական մարդաբանական տեսակետի վրա՝ իմ աշխատանքը կենտրոնանում է որոշակի վայրի՝ Գերմանիայի Օսնաբրուկ քաղաքում գտնվող Շինկել թաղամասի վրա: Հատկապես շեշտը դրվում է նախկին ԽՍՀՄ-ի մարդկանց վրա, մի խումբ, որը 1990-ականների սկզբին ավելի մեծ թվով արտագաղթեց Գերմանիա: Լրատվամիջոցները և պոպուլիստական դիսկուրսները հաճախ ներկայացնում են միգրանտների թաղամասերը որպես «խնդրահարույց վայրեր», որպես աճող անապահովության և հանցավորության վայրեր. իրավիճակը տեղին է նաև Շինկելի դեպքում: Բայց ի՞նչ են մտածում նման բնակավայրերի բնակիչները սեփական բնակավայրերի և իրենց թաղամասերի մասին: Միգրանտներն իրենց հետ բերում են որոշակի գաղափարներ իրենց հին կենսամիջավայրից դեպի իրենց նոր բնակության վայրեր և այդպիսով արդեն իսկ իրենց համար ստեղծում են որոշակի բարոյական հասկացություններ, թե ինչ է նշանակում կամ կարող է նշանակել «լավ» հարևանությունը: Որքանո՞վ են իրականանում այն արժեքները, որոնք նրանք բերել են իրենց հետ ներգաղթից հետո: Իսկ ի՞նչ են անում մարդիկ իրենց շրջապատող միջավայրն ավելի հարազատ ու հանելի դարձնելու համար: Միգրացիոն ընթացիկ հետազոտություններին համապատասխան՝ հատվածը վերլուծում է բազմաթիվ ցանցերում ներկառուցված միգրանտների հարաբերությունները: Հարցն այս պահին այն է, թե որքանով են թաղամասի ակումբները, ասոցիացիաները, հանդիպման վայրերը կամ այլ սոցիալական

ենթակառուցվածքները կարևոր եղել և մնում «լավ հարևանություն» հասկացությունը հասկանալու և ձևավորելու համար:

ՀԱՍՄԻԿ ԿՆՅԱԶՅԱՆ

Հասմիկ Կնյազյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի կրտսեր գիտաշխատող է: Նա սովորել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Ազգագրության բաժնում: Ծարունակել է երկրորդ մագիստրոսական կրթությունը Սանկտ Պետերբուրգի Եվրոպական Համալսարանի մշակութային մարդաբանության բաժնում: Նրա հետազոտական հետաքրքրությունների շրջանակը ընդգրկում է հիշողության մարդաբանությանը, սովետական առօրեականությանը, վիզուալ և քաղաքի մարդաբանությանը:

«ԿԱՐԳՈՒԿԱՆՈՆՈՎ» ՓՈՎԱԾ ԼՎԱՅՔ. ԲԱՂԱՔԱՅԻՆ ԲԱԿԸ ՈՐՊԵՍ «ՊԱՆՕՊՏԻԿՈՆ»

Դիտարկելով Հայաստանի քաղաքային բակերում լվացքի պարաններին փռված շորերի դասավորությունը՝ դրանցում կարելի է նկատել որոշակի օրինաչափություններ, օրինակ՝ փռված երկարից կարճ, ըստ գույնի կամ տեսակի, կամ պարզապես առանձնացված հագուստ սեռով կամ տարիքով պայմանավորված: Դրանք կարող են ունենալ նաև փռելու որոշակի ուղղություն, տեսք, ձև ևն: Հայկական մշակությունում լվացք փռելու այսպիսի «կանոնների» մասին ձևավորված պատկերացումները, բացի գուտ ռացիոնալ՝ շորերի չորացման գործառնությից, պարունակում են հավելյալ իմաստներ:

Այս հետազոտության նպատակն է ցույց տալ նման պատկերացումների սոցիալ-մշակութային հիմքերը և այն, թե ինչ պատմական իրողությունների արդյունքում են դրանք ձևավորվել: Հետազոտությունը առնչվում է սովետական առօրեականության մարդաբանությանը և շոշափում է գենդերային և սեմիոտիկ խնդիրներ:

Անձնական դիտարկումների, վիզուալ և մեդիա աղբյուրների, խորացված հարցազրույցների արդյունքում ստացված նյութի վերլուծությունից պարզում են, որ լվացքն ու այն փռելու «կանոնները» պատմում են՝

- արդիականացող, արդյունաբերականացող քաղաքում անցած դարաշրջանի, այսպես կոչված, «հայկական ընտանիքի» մոդելի փոխակերպումների,
- այդ շրջանում գյուղերից դեպի քաղաքներ դեմոգրաֆիական շարժերի արդյունքում ձևավորված քաղաքային լանդշաֆտի առանձնահատկությունների,
- ինչպես նաև քաղաքային բակի ու դրանում հայտնված գյուղական բնակչության կողմից ստեղծված համայնքային-հարևանական հարաբերությունների արդյունքում ձևավորված հանրային-անձնական տարածքների յուրօրինակ ընկալումների մասին:

ԼԵՎՈՆ ԱՐԲԱՀԱՄՅԱՆ

Լևոն Արբահամյանը մշակութային մարդաբան է, նա դեկլարարում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգաբանության բաժնի: Գիտական հետաքրքրությունները ներառում են հայ ազգագրությունը, քաղաքի մարդաբանությունը, բողոքական շարժումները, համեմատական առասպելաբանությունը և արխայիկ մշակույթները:

«ԳՎԱՐԴԻԱՆԵՐԻՑ» ՄԻՆԶԵՎ ԹԱՂԱՅԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԵՐԵՎԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ (1950-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՎԵՐՉԵՐԻՑ ՄԻՆԶԵՎ

ՄԵՐ ՕՐԵՐԸ)

Դիտարկվում է Երևանի սոցիալական տարածքի կազմակերպումը 1950-ականների վերջերին, երբ ստեղծվեցին այսպես կոչված «գվարդիաները»՝ օրենքով գողերի հեղինակությունը նվազեցնելու նպատակով: Հետագայում անհրաժեշտ է դառնում վնասազերծել արդեն «գվարդիաները»՝ հատուկ

ստեղծված «դրուժինաների» միջոցով: Քննարկվում է «գվարդիաների» դերը քաղաքի սոցիալական տարածքներ ձևավորելու գործում և նմանատիպ հետագա կառույցները, դրանց առանձնահատկությունները տարբեր ժամանակահատվածներում՝ «ցուրտ ու մութ տարիների» դեռահասները «լեվի» լույսի ապահովման գործում, թաղային հեղինակությունների դերն ընտրություններում, թաղերի թափանցելիությունը՝ «սեղանիկային» առևտրի տարիներից սկսած: Հետազոտությունը հիմնված է խորացված հարցազրույցների, արխիվային նյութերի և ինքնազգագրական մեթոդով գրանցած նյութերի վրա:

ՄՄԲԱՏ ՀԱԿՈՐՅԱՆ

Մմբատ Հակոբյանը թեկնածուական աշխատանք է գրում Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Նրա աշխատանքը նվիրված է Երևանում ժամանակակից թաղման ծեսին, մասնավորապես՝ ծեսի դիսկուրսների և պրակտիկաների ուսումնասիրությանը:

ԹԱՂՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ. ԳՅՈՒՂԱԿԱՆ, ԹԵ՛ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԾԵՍ

Թաղման ժամանակակից ծեսին վերաբերող ամենատարածված դիսկուրսներից մեկն առնչվում է գյուղական և քաղաքային թաղումների «բանավեճին»: Մի կողմից մարդիկ քննադատում են քաղաքային թաղումը, պիտակավորելով այն որպես շքեղ, պրեստիժային և ցուցադրական: Այս դիսկուրսում քաղաքային թաղման ծեսի հիմնական առանձնահատկությունները կապվում են սգո սրահների, ռեստորանների, թաղման ծառայությունների և ծաղկեպսակների հետ: Մյուս կողմից էլ քննադատության է ենթարկվում նաև գյուղական ծեսը՝ հիմնականում իր մեծաքանակ մասնակիցների և հոգեհացի մեծ սեղանի պատճառով:

Վերջին տարիների կատարած դիտարկումները ցույց են տալիս, որ մեծ հաշվով քաղաքում և գյուղում անցկացվող թաղումների սահմանները սկսում են լողզվել. քաղաքում մեծաթիվ մասնակիցներով ծեսերը, հոգեհացի սեղանները և նույնիսկ ցուցակով գումար հավաքելը վաղուց արդեն ընդունված ավանդույթներ են, իսկ ահա գյուղերում աստիճանաբար հայտնվում են սգո ծառայություններ, սրահներ և հոգեհացի մատուցման ռեստորանային մշակույթ: Այդուհանդերձ դիսկուրսիվ մակարդակում մարդիկ դեռ շարունակում են փնտրել թաղման ավելի ճիշտ տարբերակ՝ որոշների համար քաղաքային, իսկ որոշների համար էլ գյուղական:

Երկու դիսկուրսն էլ մեծ հաշվով մեղադրում է հակադիր կողմին չափազանց շքեղության և էլիտարության մեջ, ինչը շատ հաճախ կապվում է թաղման տնտեսական ասպեկտի հետ: Սույն հետազոտության շրջանակներում փորձ կարվի հասկանալ, թե ինչ առանձնահատկություններ ունեն քաղաքային և գյուղական թաղման դիսկուրսները և ինչո՞ւ են դրանք առնչվում պրեստիժայնության դիսկուրսի հետ:

ՍԱՅԱՆԱ ՆԱՄՍԱՐԱՆԿԱ

Սայանա Նամսարանյան Քենթրիջի համալսարանի մոնդոլական և ներքին սահմանային հետազոտությունների բաժնի ավագ գիտաշխատող է, որն աշխատում է ESRC-ի կողմից ֆինանսավորվող «Ռեսուրսների սահմաններ. անդրասահմանային սահմանային գետի ջրային կառավարում» ծրագրի վրա: Սանկո Պետերբուրգի համալսարանի սինդոգիայի բաժնին ավարտելուց հետո նա ստացել է համեմատական ազգագրության մագիստրոսի կոչում Չենչիի ազգային համալսարանում (Թայպեյ): Արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա, Ռուսաստանի գիտությունների ակադեմիա) պաշտպանել է նախասարդի Չինաստանի քաղաքական և մշակութային պատմության վերաբերյալ թեկնածուական թեզը, գիտական պաշտոններ է զբաղեցրել Մաքս Պլանկի անվան Սոցիալական մարդաբանության ինստիտուտում (Հալլե, Գերմանիա) և որպես դասախոս դասավանդել է Բեռնի (Շվեյցարիա) համալսարանի Կրոնների և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրության ինստիտուտում:

Իր սևադեմիսական կարիերայի ընթացքում նրա հետազոտական հետաքրքրությունները ընդգրկել են մոնոդրակսան և սինդրոգիայի, բուրյաթական սիյուռքների և ազգակցական հարաբերությունների, մայրցամաքային գաղութատիրության և սահմանագիտության թեմաների լայն շրջանակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ քաղաքներին և չին-ռուսական սահմանի երկայնքով սահմանային տարածքներին: Նա դասավանդում է Սոցիալական մարդաբանության ամբիոնում «Սահմանները և սահմանային երկրները Հյուսիսային Ասիայում» դասընթացը Inner Asia ամսագրի համար:

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՃԱՐՏԱՐԱԳԵՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՈՒՐԲԱՆԻԶՄԻ» ՕՏԱՐՈՒՄԸ
ԿԱՄ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ ՌՈՒՄ-ՉԻՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՄԵՐԶ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ**

Սահմանամերձ քաղաքները (ինչպես և սահմանները) սովորաբար ուժեղացված հսկողության և խստության վայրեր են: Իսկ ճարտարապետական մտածողությունը նման վայրերում արտացոլում է սահմանամերձ բնակչության ապրելակերպի երկակիությունը՝ նրանք թե՛ խաղաղ բնակիչներ են, և թե՛ զինյալներ: Վենդի Փուլանը (2011) ներմուծել է հատուկ եզրույթ «սահմանային ուրբանիզմ»՝ նկարագրելու համար սահմանամերձ քաղաքների ֆիզիկական և սոցիալական կառուցվածքների այս բաժանման և մասնատման երևույթը՝ քաղաքային/քաղաքացիական կառույցի, կիսառազմական արվարձանների և ամրացված ոչ ոքի չպատկանող կամ շրջակայքի մեռյալ գոտիների միջև: Նմանապես, իմ հոդվածը քննարկում է «սահմանային ուրբանիզմի» երևույթը, որը դեռ գերիշխում է սահմանամերձ Չաբայկալսկ քաղաքում, որը գտնվում է Ռուսաստան-Չինաստան սահմանին, ինչպես նաև, թե ինչպես է այս աճող քաղաքն օգտագործում և կրնում իր շուրջը գտնվող կիսառազմական սահմանային տարածքները Չինաստանի հետ սահմանային առևտրային կարիքների համար: Չավելշտալի է, որ չինացիների դեմ կառուցված ցեմենտավորված խրամատներն ու ամրացված բունկերը վաճառվում են չինացի սահմանային առևտրականներին:

Այնուամենայնիվ, ես պնդում եմ, որ Չաբայկալսկում պատերազմի և օտարման ճարտարապետությունը առևտրային և բնակելի վերանորոգումներում ճարտարապետական միաձուլումների վերածման փորձերը հանգեցնում են «ճարտարապետական շփոթության», երբ դրա իրական ռազմական ներուժը չի կարող քողարկվել դեկորատիվ ճարտարապետական նախշերի հետևում: Ավելին, հաշվի առնելով մեր օրերում ռուսական պետության աճող ռազմականացումը, տների վերածված ամրացված բունկերները կարող են հեշտությամբ վերափոխվել ռազմական բունկերների՝ այսպես կոչված «ԴՕՏ» և «ՉՕՏ»՝ մարտական դիրքերի և կրակակետերի:

Այսպիսով, կարծում եմ, արժե ենթադրել, որ «հետսոցիալիստական քաղաքը» (Alexander & et al 2007; Kinossian 2012) վերակառուցելու փորձերում Չաբայկալսկը չի կարողացել զարգանալ որպես առևտրի կենտրոն, համեմատ իր քույր քաղաքի՝ Մանջուրիայի հետ (սահմանային քաղաք, որը գտնվում է սահմանի չինական կողմում), և սահմանների վատագույն ազդեցությունը (ինչպիսիք են սահմանների շարժունակության սահմանափակումը, սահմանափակող առևտրային կանոնակարգերը, զինվորական անձնակազմի ընդլայնումը) շարունակում է սահմանափակել իր քաղաքացիական կառույցի զարգացումը:

2-ՐԴ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԴՇԱՖՏ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ՄԱՐԻԱ ԳՈՒՆԿՈ

Մարիա Գունկոն Օբսֆորդի համալսարանի (Մեծ Բրիտանիա) Միգրացիայի, քաղաքականության և հասարակության, մարդաբանության և թանգարանային ազգագրության դպրոցի ասպիրանտ է: Աշխատում է «Դատարկություն. կենդանի կապիտալիզմ և դեմոկրատիա հետսոցիալիստականից հետո» նախագծի վրա (Եվրոպական հետազոտությունների խորհուրդ): Մարիան մագիստրոսի կոչում է ստացել Լոնդոնում լի անվան

Մոսկվայի պետական համալսարանից (2012)՝ մարդաշխարհագրություն մասնագիտությամբ (հոդօգտագործման կառավարում մասնագիտությամբ) և Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտից՝ մարդկային աշխարհագրության գիտությունների թեկնածու (2015 թ.): Նա հրավիրյալ հետազոտող է եղել Լայբնիցի անվան Տարածաշրջանային աշխարհագրության ինստիտուտում (Լայպցիգ, Գերմանիա) 2015 թ. և Géographie-cités Lab CNRS / Université Paris 1 Panthéon-Sorbonne (Փարիզ, Ֆրանսիա) 2019 թ.: Մարիայի հիմնական գիտահետազոտական հետաքրքրությունները վերաբերում են քաղաքային պլանավորմանը և քաղաքականության մշակմանը, վայրերի ստեղծմանը, քաղաքների փոքրացմանը, ավերակներին, ավերածություններին և պետության մարդաբանությանը:

Նա եղել է ծրագրի ղեկավար «Տեղական նախաձեռնությունների դերը ծայրամասային փոքր և միջին քաղաքների վերածննդում Ռուսաստանում» (2018-2020, Հիմնարար հետազոտությունների ռուսական հիմնադրամ), Փոքրացող քաղաքների կենսամակարդակի բարելավում համատեղ ստեղծագործական գործունեության միջոցով (2021-2022, ERA.Net RUS Plus / Հիմնարար հետազոտությունների ռուսական հիմնադրամ): Մարիայի հետազոտությունները հրատարակվել են այնպիսի ամսագրերում, ինչպիսիք են Cities, European Planning Studies, Geografiska Annaler, Series B: Human Geography, Environment and Planning C: Politics and Space:

ԷԼԻՑԱ ԿԱՊՈՒՇԵՎԱ

Էլիցա Կապուշևան սոցիալական ու մշակութային մարդաբան է, սովորում է Վիեննայի համալսարանի մագիստրատուրայի վերջին կուրսում: Նրա գիտական հետաքրքրությունները հիմնականում վերաբերում են խաղաղության ու հակամարտության ուսումնասիրություններին ու շրջակա միջավայրի մարդաբանությանը: Տարածաշրջանային հետաքրքրության առանցքում Բալկանները և Հարավային Կովկասն են: Սա այն գլխավոր շարժառիթներից է, որով նա իր առաջիկա հետազոտությունը պատրաստվում է իրականացնել Հայաստանում:

ՔԱՂԱՔԻ ՄԱՐԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԻՑ ԴԵՊԻ ՄԱՐԿԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ

Հիմք ընդունելով իմ նախորդ երկու ուսումնասիրությունների՝ Պլովդիվի (Բուլղարիա) քաղաքային շուկաների և Վիեննայի սոցիալական բնակարանային քաղաքականության վերաբերյալ անդրադարձները, այս հոդվածը ուսումնասիրում է, թե ինչպես մարդաբանական գաղափարները, մեթոդաբանությունը և համագործակցությունը կարող են ակտիվորեն արձագանքել քաղաքային հրատապ խնդիրներին: Կիրառելով բաց հարցերը, որոնք առաջացել են այդ նախորդ աշխատանքներից, ես քննարկում եմ, թե ինչպես կարող ենք փորձել վերաիմաստավորել որոշակի հասկացություններ և օգտագործել դրանք որպես գործիքներ մասնակցային գործողությունների հետազոտության համար: Նաև փորձելու եմ հասկանալ, թե ինչ ներուժ է այն ունի՝ բացահայտելու սոցիալական հարաբերությունների և քաղաքաշինական պրակտիկայի նոր չափումները վիճելի քաղաքային տարածքների ֆոնին: Այս ներդրումը նպատակ ունի քննարկում ծավալել այն մասին, թե ինչպես մարդաբանական հետազոտությունները կարող են նպաստել քաղաքային խնդիրներից բխող ընթացիկ սոցիալական կարիքների լուծմանը և ինչպես կարող են մարդաբանները ակտիվորեն մասնակցել ինստիտուցիոնալ ամրապնդմանն և սոցիալական կապերի հզորացմանը՝ քաղաքային գիտելիքները համատեղելով կիրառական հետազոտությունների հետ՝ ավելի արդար և ներառական քաղաքաշինության համար:

ԻՎԱՆՋԵԼԻՆ ՄԸՔԳԼԻՆ

Իվանջելին ՄրքԳլինը Կալիֆորնիայի համալսարանի (Բրրբրի) աշխարհագրության բաժնի ասպիրանտ է: Նա նաև Հարվարդի դիզայնի ավարտական դպրոցի Դիզայնի հետազոտություն բաժնի մագիստրոս է: Նրա հետաքրքրությունների շրջանակը ներառում է քաղաքական էկոլոգիան աղետների և պատերազմների պայմաններում, ինչպես նաև քննադատական մեթոդոլոգիաները: Ակադեմիայից դուրս նա քարտեզագետ ու GIS-ի (աշխարհագրական տեղեկատվական համակարգերի) մասնագետն է:

ԱՎԵՐԱԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԼԱՆԴՇԱՖՏ. ՈՒՐԲԱՆԻՍՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ՀԵՏԱՂԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ

Սպիտակի ավերիչ երկրաշարժից ավելի քան 30 տարի անց Գյումրի քաղաքը դեռ լցված է բնական աղետից ավերված շենքերի ֆիզիկական մնացորդներով: Այս հոդվածում ես քննարկում եմ ավերակների դերը քաղաքային լանդշաֆտում: Պայքարելով ավերակների՝ որպես տեսական օբյեկտի չափից ավելի էսթետիկացման դեմ, ես հակադարձում եմ՝ քննարկելով այն ուղիները, որոնցով ավերակները ինտեգրվում են քաղաքային միջավայրում՝ նույնիսկ դիմադրելով դրանց նշանակությանը: Օգտագործելով դաշտային քարտեզագրման վարժությունների և երկրաշարժի բանավոր պատմությունների միջոցով հավաքված տեղեկատվությունը, ես պնդում եմ, որ գոյություն ունի ավերակների բազմակողմանի, պատմականորեն պայմանական ըմբռնում:

Դա անելու համար ես նախ կներկայացնեմ ավերակների տիպաբանությունը այնպես, ինչպես դրանք գոյություն ունեն Գյումրիում, միևնույն ժամանակ կանգ առնելով Գյումրիում երկիմաստությունները ունեցող որոշ կոնկրետ ավերակների վրա: Այնուհետև ես նկարագրելու եմ Գյումրիի ավերակների տարածական հետքը՝ ընտրելով քաղաքի առանձին ավերակների հատուկ օրինակներ, որոնք արմատապես տարբեր կերպ են մեկնաբանվում: Հոդվածը կավարտվի ապա-վերա-ծանոթացման մշտական գործընթացի մասին պրովոկացիայով, որն անհրաժեշտ է ավերակները որպես ավելի մեծ քաղաքային լանդշաֆտի մաս ուսումնասիրելու համար:

ՄԱՐԳԱՐ ՀՄԱՅԱԿՅԱՆ

Մարգար Հմայակյանն արվեստաբան է և հնագետ, արվեստագիտության թեկնածու: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող է: Գիտական հետաքրքրության ոլորտներն են՝ Ուրարտուի հնագիտությունն ու արվեստը, արդի արվեստն, ինչպես նաև շարժական մշակութային արժեքների փորձաքննության մեթոդները:

ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԼԱՆԴՇԱՖՏԻ ԲԱՐԵՓՈՒՆՈՒՄԸ ԵՎ ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԻՋԵՎԱՆՅԱՆ ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՄՊՈՉԻՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Քանդակագործության բնագավառի ամենատարածված ճյուղերից մեկը՝ բոլորաքանդակը, հելլենիստական ժամանակաշրջանից սկսած լայնորեն կիրառվում է քաղաքների արտաքին հարդարանքում:

Քաղաքային տարածքների գեղարվեստական ձևավորումն ամբողջացնելու համար հայտնի փորձ է քանդակների տեղադրումը: Դրանք հիմնականում քաղաքական, հերոսական և կրոնադիցաբանական միտումով մոնումենտալ կերտվածքներ են, բայց հատկապես 20-րդ դարի սկզբից մեծ տարածում են ստացել դեկորատիվ և անգամ մանր քանդակները և տարբերվում են առաջիններից իրենց ժանրային բազմազանությամբ և ստեղծագործական առավել անկաշկանդ ձևերով: Այս տեսակի քանդակները տեղադրվում են քաղաքի հրապարակներում, զբոսայգիներում, շենքերի մուտքերի առջև և այլն: Կերտվածքները, սովորաբար, փոքրաթիվ են և դրանց ոճագեղարվեստական լուծումները

այայմանավորված են տվյալ տարածքի լանդշաֆտով և ճարտարապետական առանձնահատկություններով:

Քանդակներով քաղաքային տարածքի ձևավորման մյուս լուծումը՝ այսպես կոչված «արձանների այգիներն» են, որոնք կարող են բաղկացած լինել հարյուրից ավել կերտվածքներից և կարող են հանդես գալ որպես գլխավոր ատրիբուտներ՝ ձևավորելով յուրատեսակ քաղաքային միջավայր: Այդ քանդակները ստեղծվում են գլխավորապես մշակութային մեծ միջոցառումների՝ քանդակագործական սիմպոզիումների ընթացքում:

Քաղաքի արտաքին ձևավորման համար կա ուշագրավ ևս մի տարբերակ, երբ քանդակների միջոցով փոփոխվում կամ ստեղծվում է քաղաքային լանդշաֆտի նոր համակարգ (բնորոշ է փոքր քաղաքներին): Ասվածի ցայտուն օրինակներից է Տավուշի մարզի Իջևան քաղաքը, որտեղ 1985-1991 թթ. ընթացքում ստեղծվել են թվով 120 կերտվածքներ: Դրանք տեղադրված են քաղաքային զբոսայգիներում, ձևավորում են հրապարակներ և կամ զարդարում են քաղաքի «դարպասները»՝ այդպիսով զգալիորեն ներգործելով քաղաքային միջավայրի բարեփոխության վրա: Ստեղծված կերտվածքներն արդյունքն են Հայաստանում մինչ օրս եղած ամենալայնածավալ քանդակագործական սիմպոզիումների, որոնց յուրահատկությունն այն էր, որ քանդակագործները ստեղծագործում էին բաց երկնքի տակ, կողք-կողքի, իսկ հանրությանը հնարավորություն էր ընձեռնվում դառնալ այդ պրոցեսի անմիջական մասնակիցը: Հատկապես օտարազգի քանդակագործների շփումները տեղաբնիկների հետ, ծանոթությունը Հայաստանի տեսարժան վայրերի, հուշարձանների հետ, ազդեցություն ունեցավ նրանց ապագա կերտվածքների թեմաների և ոճերի ընտրության գործում, ինչի շնորհիվ քանդակների զգալի մասը նվիրված էին Հայաստանին՝ նրա մշակույթին, երևելի իրադարձություններին և այլն:

ՏՈՐՔ ԴԱԼԱԼՅԱՆ

Տորք Դալայանը բանագետ-լեզաբան է, բանասիրական գիտությունների թեկնածու (2002 թ.): Աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, Բանասիրության տեսության և պատմության բաժնի վարիչն է: Խոնքագրել և կազմել է մոտ մեկ տասնյակ գիտական ժողովածուներ ու գրքեր, ինչպես նաև հեղինակել է ավելի քան 100 գիտական հրատարակումներ՝ հայերեն, ռուսերեն, պարսկերեն, անգլերեն, իսպաներեն լեզուներով: Մասնագիտական հետաքրքրությունների շրջանակում են հայ բանագիտությունն ու առապելաբանությունը, համեմատական դիցաբանությունն ու լեզվաբանությունը, էպոսագիտությունը: Չբաղվում է նաև ավանդական պատումների ու արիստոփանի ազդեցության ներքո տարածաշրջանի ժողովուրդների (հայեր, քրդեր, եզդիներ, օսեր) ինքնությունների ձևավորմանն առնչվող հարցերով:

ԳԵՏԸ ԵՎ ԶՈՒՐԸ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԻԶՈՎՂԱՅԻՆ ԵՎ ՏՈՆԱԿԱՆ ԼԱՆԴՇԱՖՏՆԵՐԻ ՄԵՐԶՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ

Դասական առումով Երևանը չի համարվում «գետային» քաղաք, քանի որ քաղաքով հոսող ընդարձակ նավարկելի գետ գոյություն չունի: Սակայն Հրազդան, Գետառ գետերը և մի շարք մանր ու միջին ջրանցքներ իրենց որոշակի կնիքն են դրել քաղաքային ինքնության, անվանաբանական լանդշաֆտի (հմմտ. Գետառի փողոց, Հրազդանի խճուղի ևն), միջթաղային հարաբերությունների և առտնին ու տոնական կենցաղի, մանկական խաղերի վրա: Չեկուցման մեջ հիմնական սևեռումը դրվելու է մերձսահմանային իրավիճակներին, որոնք դրսևորվում են միջթաղային, միջբակային, երբեմն նաև՝ քաղաքի ներսում միջլեռնիկ շփումներում, ինչպես և ոչ սովորական, տոնական ու տոնակերպ իրավիճակներում: Չեկուցումը հիմնված է անձնական դաշտային դիտարկումների վրա, որոնք ժամանակին արվել են երեխաների մեջ՝ «ներսից», ինչպես դպրոցական, այնպես էլ փողոցային-թաղային միջավայրերում: Հայտնի է, որ դիցաբանական ընկալմամբ գետը հանդես է գալիս որպես սահման յուրայինի և օտարի, մարդակերպի և դիվականի, սեփական աշխարհի և անդրաշխարհի միջև: Այս առումով, գետը կարևոր խորհրդանշական դեր է խաղում մանկական միկրո տիեզերքում, սեփական սահմանների ընդգծման, տեղական

«ինքնությունների» ձևավորման հարցում: Նշված գործընթացների մեջ կարելի է դիտարկել գետի պաշտոնական անվան փոխարեն լոկալ-խոսակցական տարբերակի կիրառումը (ԽՀՀՀ), ինչպես և գետի տարբեր հատվածներում խորհրդանշական մանրատեղանունների (Չապի գյուղ, Բիծու գյուղ, «Զիկի պլաժ») գործածումը: Որոշակի տարբերակում կա նաև Երևանի երկու գետերի շուրջ ձևավորված մշակութային աշխարհների միջև. եթե Գետառն առավելաբար քաղաքակրթական, զբոսավայրային միջավայրի խորհրդանիշ է և անմիջականորեն կապված է «Կենտրոնի» հետ, ապա Հրազդանը և նրա ձորն առնչվում են ծայրամասային, կենտրոնախույս ենթամշակույթներին, խորհրդանշում են քաղաքի «մութ», առեղծվածային և միևնույն ժամանակ երեխաների/երիտասարդների համար գրավիչ, արկածային ծալքերը: «Իջնենք ձոր» արտահայտությունը, որը համարժեք է «գնանք շենքի հետև» դարձվածքին, տղայական ժարգոնում ամենացայտուն կերպով է արտացոլում քաղաքակիրթ-վայրի, թույլատրելի-արգելված (ոչ թույլատրելի) հակադրությունը և այն սահմանը, որն առկա է այդ երկու հասկացությունների միջև:

ՀԱՄԼԵՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Համլետ Մելքոնյանը ՀԱԻ արդիականության ազգաբանության բաժնում գիտաշխատող է: Ակադեմիական հետազոտական հետաքրքրություններն են՝ քաղաքի մարդաբանություն, հասարակական շարժումների մարդաբանություն, եզրիսագիտություն, տնտեսական մարդաբանություն (շուկաները անցումային փուլերում): Վերջին ակադեմիական հրատարակումները առնչվում են Հայաստանում և Վրաստանում հանրային տարածքների և ոչ ֆորմալ տնտեսության, խորհրդային սպրանքների և կարոտախտի, ուշ խորհրդային արդյունաբերական փոքր քաղաքների ինստիտուտների արդիականացման խնդիրներին: «Մշակույթը հանուն կայուն զարգացման» կազմակերպության համահիմնադիրն է:

ԳԵՏԱՌ ԳԵՏԸ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԻՆՔՆՈՒՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄՆԵՐԻ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԻՑ ՀԱԿԱՔԱՂԱՔ ՍԱՀՄԱՆԱԳԾՈՒՄ

Երևանի փոքր կենտրոնի և այնտեղ գտնվող Օդակաձև զբոսայգու լանդշաֆտային քաղադրիչներից մեկը Գետառ գետն է: Փոքր կենտրոնի տարածքում տարբեր քաղաքաշինական նախագծերի հետևանքով գետակը ներկայումս գրեթե ամբողջությամբ բետոնափակված է: Սակայն քաղաքում ապրած ավագ սերնդի մարդկանց հուշերի հոսքում այն ընկալվում է որպես փոքր կենտրոնի խորհրդանշաններից մեկը: Գետառի մարդաբանական հետազոտության խնդիրն է փորձել հասկանալ, թե Երևանի արդիականացումների տարբեր փուլերում քաղաքի բնակիչները և քաղաքաշինական նախագծերը ինչպե՞ս են փոխհարաբերվել գետի հետ: Քաղաքային տարածքի փոխակերպումների պատճառով փոփոխվում է Գետառի միայն ֆիզիկական՝ վիճակը, թե՛ դրա սոցիալական կյանքը, ինչպես նաև գետակին առնչվող մարդկանց հուզական և էկոլոգիական առօրյան: Երևանի փոքր կենտրոնի սոցիալական և քաղաքաշինական արդիականացումների ժամանակ փոխակերպվում կամ ձևավորվում են քաղաքային նոր լանդշաֆտներ և ինքնություններ: Այդ գործընթացները արտացոլվում են նաև Գետառի կենսագրության մեջ, որը ֆիզիկապես ու ընկալումների տիրույթներում դարձել է սահման հին և նոր քաղաքային լանդշաֆտների, մրցակցող պրեստիժային ինքնությունների, քաղաք - հակաքաղաք առօրեականության, սիրո ու զզվանքի զգացությունների միջև:

Այս խնդիրների ուսումնասիրության համար 2020-21 թվականներին նյութերը գրանցել են դիտարկումների, կենսագրական հարցազրույցների, բանավոր պատմության, մտաքարտեզների և թվանշանային մարդաբանության մեթոդներով: Նյութերի վերլուծության համար փորձում են կիրառել քաղաքային ինքնությունների և սահմանների, քաղաքային առօրեականության և էկոլոգիայի, սոցիալական պրեստիժայնության, հույզերի մարդաբանության շուրջ տեսական քննարկումները, սակայն դեռևս առկա է տեսական մոտեցումների որոշակիացման խնդիրը:

3-ԻԳ ՆԻՍՏ. ԳՅՈՒՄՐԻ.ԿԵՐՊԱՐ և ՊԱՏՈՒՄ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ԱՆԳՐԵՅ ԻՎԱՆՈՎ

Անդրեյ Իվանովը Ռուսաստանի ճարտարապետների միության և Ռուսաստանի քաղաքաշինական ասոցիացիայի անդամ է, ինչպես նաև ECOVAST-ի (Գյուղերի և փոքր քաղաքների եվրոպական խորհրդի) անդամ: Քաղաքային կառավարման և զարգացման մագիստրոսի աստիճան ստացել է Բնակարանային և քաղաքաշինական հետազոտությունների ինստիտուտից (IHS)/Էրազմուս համալսարան, Ռոտերդամ, Նիդեռլանդներ: Իրավական գոտիավորման, պատմական միջավայրի պահպանման և ժողովրդական ժառանգության հիմնախնդիրների փորձագետ է: Գործունեության ներկայիս ոլորտը Մոսկվայի արդյունաբերական գոտիների քաղաքաշինական ներուժի վերլուծությունն ու զարգացումն է: Ռուսաստանի և ԱՊՀ երկրների պատմական քաղաքների քաղաքային ժառանգության հետ աշխատանքային մեծ փորձ ունի և մասնակցել էՄ-ի, Եվրոպայի խորհրդի, USAID-ի և Համաշխարհային բանկի հովանու ներքո քաղաքային ժառանգության պահպանման միջազգային նախագծերին: Հեղինակ է մի քանի գրքերի (Gyumri: The Vernacular of the Black Tufa. Yerevan, 2021; (And)Yerevan. Studies on the Spirit of Place: Collected Essays. Yerevan, 2014; Two Gogolya. Median Streets of the Late-imperial City (Odessa / Baku). Moscow, 2010, etc.), և ավելի քան 200 հոդված գիտական ժողովածուներում և մասնագիտական ամսագրերում (ներառյալ ավելի քան 20 հոդված օտար լեզուներով՝ հայերեն, անգլերեն, լեհերեն): Ճարտարապետ, քաղաքագետ, հետազոտող, գրող է, Ճարտարապետության միջազգային ակադեմիայի Մոսկվայի մասնաճյուղի պրոֆեսոր:

ԿԱՐԻՆԵ ԲԱԶԵՅԱՆ

Կարինե Բազեյանը պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ, ՀՀ ԳԱԱ Ծիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող, դասավանդում է ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի թանգարանագիտության և մատենագիտության ամբիոնում: Գիտական հետաքրքրությունների շրջանակում Ալեքսանդրապոլ-Լենինականի ազգագրությունն է և հայ ժողովրդական արվեստն ու արհեստները: Հեղինակ է 2 մենագրության և 90-ից ավել հոդվածների:

ԹՈՐԳՈՄ ԱՂԱՆՅԱՆ

Թորգոմ Աղանյանը ախարտել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության ու ազգագրության ինստիտուտի սապիրանտուրան ազգագրություն մասնագիտությամբ, պատմական գիտությունների թեկնածու է:

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆ-ԳՅՈՒՄՐԻԻ ՆԵՐՏԱՐԱՐԾՔԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ (ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԴԻՏԱՆԿՅՈՒՆ)

Գյումրին Հայաստանի ուրույն դիմագիծ ունեցող այն քաղաքն է, որի ստեղծման, կայացման ու զարգացման գործընթացը ներկայացված է բազմաթիվ ու բազմաբնույթ աղբյուրների, գիտական ու հանրամատչելի գրականության մեջ: Ի սկզբանե կառուցվելով որպես ստրատեգիական նշանակություն ունեցող ու քաղաքաշինական հստակ հատակագծով քաղաք, նրա տարածքն անընդհատ մեծացել է ինչպես ժողովրդագրական, այնպես էլ տնտեսամշակութային ու քաղաքական տարբեր գործոնների ազդեցության բերումով: Քաղաքային մշակույթի յուրահատկությունների առումով այն հստակ տարբերակվում է իր պատմական զարգացման երեք փուլով, ինչն արտահայտված է քաղաքին տրված երեք անունների մեջ: Ըստ այդմ՝ որոշակիորեն առանձնանում են քաղաքի տվյալ ժամանակաշրջանի համար բնութագրական տարածքային/կառուցվածքային կազմակերպման մի շարք հատկանիշներ, որոնք արտահայտում են ինչպես պետական քաղաքականության մոտեցումներն այս հարցում, այնպես էլ քաղաքային բնակչության մասնակցությունը:

Չեկուցման մեջ փորձ է արվելու ներկայացնել քաղաքի տարածքային ու վարչական բաժանման երկու՝ պետական ու ժողովրդական մոտեցումները դրա ձևավորման ու զարգացման երեք փուլերում: Մասնավորապես դիտարկվելու են՝

ա/ Ալեքսանդրապոլի թաղային բաժանումներն ըստ էթնիկական, ներէթնիկ խմբերի ու կոնֆեսիոնալ հատկանիշների, որոնք գերակայող էին նոր ձևավորվող քաղաքի կայացման մեջ:

բ/ Տնտեսական գործոնի դերը Լենինականի՝ որպես զարգացող արդյունաբերական ու նոր «բանվորական» մշակույթ կրող քաղաքի վերածվելու ու դրան համապատասխան նոր թաղամասերի առաջացման գործում:

գ/ Հետերկրաշարժյան Գյումրու վերակառուցման ու քաղաքի նոր կերպարի ձևավորման գործընթացի յուրահատկությունները, որտեղ դրսևորված են աղետի վերացման ուղղությամբ վերջին 30 տարիներին ընթացող գործընթացներն իրենց ամբողջության մեջ:

ԳԱՅԱՆԵ ԾԱԳՈՅԱՆ

Գայանե Ծագոյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Արդիականության ազգագրության բաժնի առաջատար գիտաշխատող է: Սովորել է ԵՊՀ-ում (մագիստրոս, 1995 թ., Պատմության ֆակուլտետ, Ազգագրության ամբիոն) և 2010 թ.-ին Հնագիտության և ազգագրության ինստիտուտում ստացել է պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Գիտական հետաքրքրությունների դաշտում են հայկական սախաղակի և ժամանակակից առօրյան, քաղաքի և հիշողության մարդաբանությունները: Հեղինակ է շուրջ 100 հրատարակումների, այդ թվում՝ «Յոթ օր և յոթ գիշեր. հայոց հարսանիքի համայնապատկեր», 2011, Երևան. «Գիտություն», 618 էջ, “The Camcorder Operator As a New Character in the Armenian Wedding” (Anthropology & Archeaology of Eurasia, 2000, 38 (4): 9-29), և «Երկրաշարժի մեմորիալիզացիան Գյումրիում» (Antrpologicheskii Forum, 2009, 11: 328-369 և այլն):

URBS RIDENS. ԳՅՈՒՄՐԻՆ ՈՐՊԵՍ «ԿՈՍԻԿ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ» ԾԻԾԱՂՈՂ ՔԱՂԱՔ

Ծիծաղի՝ որպես հասարակական կոմունիկացիայի և հույզերի մարդաբանական հետազոտությունները նախևառաջ հղում են Միխայիլ Բախտինի աշխատանքին (Бахтин: 1965): Քաղաքային ուսումնասիրություններում ծիծաղի ֆենոմենն ավելի հակված են քննարկել միջնադարյան և հատկապես ուշ միջնադարյան բնակավայրերի առնչությամբ (Darnton 1984): Սակայն, ինչպես ցույց են տալիս վերջին շրջանում հրատարակ եկած հետազոտությունները, ծիծաղն ու հատկապես երգիծանքը դառնում են մոդերն քաղաքի կայացման կարևոր միջոցներից (Critchley 2004; Billig: 2005; Hakkarainen 2019):

Այս առումով հատկապես հետաքրքիր են այն քաղաքները, որոնք ինչ-որ պատճառներով ձեռք են բերել «սրամիտների» բնակավայրի համբավը: Սա տարբեր է այն երևույթից, որ քաղաքային ֆոլկլորում որոշակի քաղաքներին վերագրվում են անեկդոտների թափառող սյուժեներ՝ արտացոլելով քաղաքական իրավիճակի փոփոխությունները: Օրինակ՝ նախկին խորհրդային անեկդոտների մի մեծ շարք, որի հերոսները տարբեր ազգությունների էին (հայեր, վրացիներ, ադրբեջանցիներ կամ ռուսներ), հետխորհրդային շրջանում նույն սյուժեները վերագրում են հայաստանյան տարբեր քաղաքների բնակիչների: Չեկուցման մեջ կանգ կառնեն ոչ թե այդ անեկդոտային կերպար ստանալու խնդրի վրա, այլ հումորի այնպիսի դրսևորման, որը դառնում է քաղաքային ինքնության բնութագրիչ՝ Գյումրի քաղաքի օրինակով: Գյումրու՝ որպես «սրամիտների քաղաք» կերպարի ընկալումը և՛ համահայկական է, և՛ ներքաղաքային:

Քաղաքի «ծիծաղող» կերպարի ձևավորումը պայմանականորեն կարելի է բաժանել յոթ շերտի, որոնք արտացոլում են Գյումրու սոցիալ-մշակութային պատմությունը.

1. Եկվոր քաղաքացի vs. տեղացի գյուղացի,

2. Խմբային կարծրատիպերի վրա հիմնված հումոր՝ լոկալ, կրոնական, էթնիկ խմբերի սահմանների քարտեզագրում,
3. «Գլուխ գովալ». արհեստավորի և առևտրականի հումոր,
4. Պատկերավոր խոսքը որպես հաղորդակցման քաղաքային լեզու՝ Գյումրին որպես հանրային տարածքների ընդլայնված միջավայր,
5. Բնակավայրերի ստորադասված վարչական խորհրդային համակարգ. քաղաքային ինքնության գերակայությունը «ազգայինի», «էթնիկի», «կրոնականի» հանդեպ (լեռնագանգի vs. գյուղացի և էրևանցի),
6. Հումորի ինստիտուցիոնալացում (կերպարի մուտքը մասսայական մշակույթ՝ ֆիլմեր, հեռուստահաղորդումներ, ցուցահանդեսներ ևն),
7. Հումորի կոմերցիալացում (հումորը որպես քաղաքի զբոսաշրջային բրենդ):
Չեկուցման մեջ քաղաքային կերպարի զարգացման այս շերտերի քննարկումն ընդամենը կուրավագծվի՝ խնդրայնացնելով քաղաքի ուսումնասիրության նման

ՎԱՐԴԱՆ ՉԱԼՈՅԱՆ

Վարդան Չաղոյանը արվեստի և գրականության քննադատ է: AICA՝ Արվեստի քննադատների ազգային ասոցիացիայի անդամ և անկախ հետազոտող է: Հայաստանում և արտերկրում հրատարակված նրա ուսումնասիրությունները նվիրված են ժամանակակից արվեստին, մշակույթին, կրոնի պատմությանը, ազգայնականությանը և քաղաքականությանը:

ԳՅՈՒՄՐԻԻ GENIUS LOCI-ԻՆ. ԻՆՉՊԵՍ Է ԱՐՎԵՍԱԳԵՏԸ ՍՏԵՂԾՈՒՄ ՏԵՂԻ ՈԳԻՆ

Սկսած անցյալ դարի 70-ական թթ.-ից genius loci հասկացությունը ակտիվորեն օգտագործվում է մշակույթի տարբեր ոլորտներում: Երևանի genius loci-ի մասին գրել է ռուս մշակութաբան Ա. Իվանովը: Բայց որքան զարմանալի է, Գյումրիի genius loci-ի մասին չի գրվել: Ա. Իվանովը Երևանի genius loci-ի մասին գրել է ճարտարապետական ֆենոմենոլոգիայի տեսանկյունից: Գյումրիի համար մենք ընտրել ենք այլ մոտեցում՝ ինչպես է արվեստագետը ստեղծում տեղի ոգին՝ տեղի հանճարը: Քաղաքը, տեղը՝ լանդշաֆտը, սոցիակական և մշակութային միջավայրը ստեղծում է մարդուն, բայց նաև՝ մարդն է էլ փոխում տեղը, հատկապես, եթե նա նշանային անձնավորություն է: Այս դեպքում նա «տեղի հանճարն է»: Այլ է Լոնդոնը՝ Դիկենսից, Պետերբուրգը՝ Դոստոևսկուց, Կարսը՝ Չարենցից հետո: Մենք այլևս այլ կերպ ենք տեսնում այդ քաղաքները, նայում նրանց: Հանճարը նոր լույս է սփռում այն տեղի վրա, որտեղից ծագում է կամ ստեղծագործում: Նա տեղին ոգի է տալիս: Ամեն անգամ, երբ նկարչի անունը կապվում է տեղի հետ, տեղի է ունենում արվեստի և քաղաքի հանդիպումը, մարդկային genius-ի և տեղի հանճարի՝ Genius loci հանդիպումը: Genius-ը լատինական աստվածություն էր, պահապան հրեշտակ, որին նվիրված էր մարդու ծննդյան օրը: Genius-ը լինելով անձնական աստվածություն՝ մարմնավորում է մեր մեջ եղած անանձնականը, ինչը գերազանցում է ինքներս մեզ, մեր հանճարը: Տեղը, որի հետ կապված է արվեստագետը, որտեղ ծնվել և/կամ ստեղծագործում է, այն տեղը, որ նրան ներշնչում է, genius loci՝ «տեղի հանճարն» է: Genius loci-ին տեղի ոգին է, քաղաքին կամ լանդշաֆտին հատուկ հոգևոր մթնոլորտը, այն, ինչ տեղը դարձնում է եզակի, այն, ինչ նրա ինքնության էությունն է: XIX դարի վերջին XX դարի սկզբին Գյումրին աշխարհին տվեց երեք հանճար՝ Ավետիք Իսահակյան, Գեորգի Գուրջիևի և Մերգել Մերկուրով: Անհնար է հասկանալ Գյումրիի genius loci-ին առանց այդ երեք հանճարների. Գյումրիի «տեղի հանճարը» իրեն բացահայտում է նրանց միջոցով, քաղաքի հետ նրանց կապի և նրանց ոգու միջոցով:

ԳԱՅԱՆԵ ԱՂԱՔԱԼՅԱՆ

Գայանե Աղաբալյանը Հայաստանի ամերիկյան համալսարանի անգլերենի և հաղորդակցություն բաժնի շրջանավարտ է: Նա պժմ սովորում է Գլազգոյի համալսարանի կրթության բաժնում: Գայանեն աշխատում է Հայաստանի ամերիկյան համալսարանում որպես Գեներեր և սոցիալական փոփոխություն ու ուսումնառություն, Ակտիվիզմ և սոցիալական շարժումներ առարկաների դասախոսի օգնական: Նա նաև հետազոտող է Բանավոր պատմության նախագծում, որը քարտեզագրում է ցեղասպանության հետքերը և հիշողությունները Հայաստանի քաղաքային լանդշաֆտում: Գայանեի հետազոտական աշխատանքը հիմնված է բանավոր պատմության մեթոդաբանության վրա և ուսումնասիրում է ճարտարագետ պապիկի և նրա նախագծած շենքերի կապը:

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ՊԱՏՈՒՄՆԵՐ ԿԱՌՈՒՅԵԼԻՍ. ՄԻ ՃԱՐՏԱՐԱԳԵՏԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Այս հետազոտությունը ուսումնասիրում է ճարտարագետի և նրա շենքերի մեջ եղած կապը: Այն նպատակ ունի բացահայտել, թե ինչպես են անցյալի մասին իր հիշողությունները և ապագայի ցանկությունները արտացոլվում այս կառույցներում: Հետազոտությունը կատարվել է բանավոր պատմության հարցազրույցների միջոցով իր պապիկի հետ, ով ավելի քան 45 տարի աշխատել է որպես ճարտարագետ Գյումրիում և կառուցել ու ղեկավարել է բազմաթիվ շենքերի շինարարությունը: Հետազոտությունը կենտրոնացած է հինգ վայրում՝ Գյումրու երկաթուղային կայարան, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Լենինականի մասնաճյուղ, Սև շատրվան, Կումայրի տուրիստական կենտրոն և Շիրակ հյուրանոց: Այս վայրերից յուրաքանչյուրը պապիկիս համար նոր իմաստ է ձեռք բերել և դարձել խորհրդանիշ ինչպես նրա անձնական պատմումում, այնպես էլ Գյումրու հավաքական ու մշակութային պատմության մեջ: Հետազոտությունը նպատակ ունի նաև ուսումնասիրել իմ և պապիկիս հարաբերությունները: Ինչպե՞ս է այն փոխվել այս հետազոտության ընթացքում: Ինչպե՞ս են նրա պատմությունները համատեղվում իմ պատմության հետ: Արդյո՞ք նրա պատմությունները փոխեցին իմ պատկերացումները Գյումրիի մասին:

4-ՐԿ ՆԻՍՏ. ՀԻՇԵԼՈՎ ՔԱՂԱՔԸ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ՄԱՐԶԵԼԼՈ ՄՈՒԻԿԱ

Մարչելլո Մոլիկան ստացել է Ph.D. սատիճան Լյովենի համալսարանի սոցիալական գիտությունների բնագավառում (2005թ.) և Խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների եվրոպական դոկտորի սատիճան (2007) Դյուստոյի համալսարանից: Մեսինայի համալսարանի մշակութային մարդաբանության և էթնոլոգիայի դոցենտ է: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում են՝ կրոնական և քաղաքական բռնություն, էթնոկրոնական փոքրամասնություններ, քաղաքական մոբիլիզացիա թեմաներով ուսումնասիրություններ: Դաշտային աշխատանքներ է կատարել Հյուսիսային Իռլանդիայում, Հարավային Լիբանանում, Արևելյան Թուրքիայում, Օկուպացված տարածքներում և Բարսելոնում, ինչպես նաև Հարավային Կովկասում: Նա իր աշխատանքները հրատարակել է գրախոսվող գրքերում և ամսագրերում: Քաղաքային մարդաբանության հանձնաժողովի (IUAES) գործադիր քարտուղարն է:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հարություն Մարությանը ավարտել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետը (1978) և ԽՍՀՄ Գիտությունների ակադեմիայի Ն. Ն. Միկրուխո-Մակրայի անվան ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրան (1983), որտեղ և 1984 թ. պաշտպանել է թեկնածուական ստեղծագործությունը: Պատմական գիտությունների դոկտոր է (2007,

Երևան): Ներկայումս նա «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» հիմնադրամի տնօրենն է, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արդիականության ազգաբանության բաժնի գլխավոր գիտաշխատող (համատեղությամբ):

Հ. Մարությանի հետազոտությունների բնագավառն ընդգրկում է Հայոց ցեղասպանության հիշողության, ազգային ինքնության ձևափոխման, ազգային շարժումների, պատկերագրության, ավանդական հայ մշակույթի, սաղաթագրության խնդիրները:

Հ. Մարությանը երեք մենագրության հեղինակ է (այդ թվում՝ «Հիշողության դերն ազգային ինքնության կառուցվածքում. տեսական հարցադրումներ» (Երևան, 2006), «Հայ ինքնության պատկերագրությունը: Հատոր 1. Ցեղասպանության հիշողությունը և Ղարաբաղյան շարժումը» (Երևան, 2009, հայերեն և անգլերեն), համահեղինակ է հինգ կոլեկտիվ մենագրությունների, հեղինակել է շուրջ 150 գիտական հոդվածներ:

Հ. Մարությանը Այրեքս (ԱՄՆ Միչիգանի համալսարան, 1998), Ֆուլբրայթ (ԱՄՆ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտ, 2003-2004), ԴԱԱԴ (Բեռլին, Հունբուրգի համալսարան, 2013) գիտահետազոտական ծրագրերի շրջանավարտ է, 2009-2010 թթ. հետազոտություններ է իրականացրել Վաշինգտոնի հոլոքոստի հուշային թանգարանում «Հիշողության վրա հենված քաղաքականություն. հայոց և հրեից փորձառության համեմատական ուսումնասիրություն» թեմայով:

ՀԱՅՈՑ ԳԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀՈՒՇԱՀԱՄԱԼԻՐՆ ԻԲՐԵՎ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՎԱՅՐ. ԻՐԱՎԻՃԱԿԸ 55 ՏԱՐԻ ԱՌԱՋ ԵՎ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Հուշահամալիրները, որպես կանոն, ստատիկ կառույցներ չեն: Տասնամյակներ շարունակ լինելով ուշադրության կենտրոնում, հատկապես երբ իրենց բնույթով պայմանավորված ձեռք են բերում «հիշողության վայրի» գործառույթներ, դրանք «ապրում են» որոշակի ուրույն կյանքով, ինչը նախ և առաջ պայմանավորված է հասարակության կյանքում տեղ գտած փոփոխություններով: Բնութագրական է, որ հուշահամալիրներում տեղ գտնող զարգացումներին հաճախ հակառակում են դրանց հեղինակ ճարտարապետները, երբեմն իրենց անհամաձայնություններն իրավամբ պատճառաբանելով իրենց հեղինակած կառույցների ունեցած «հուշարձանային» կարգավիճակով, որը, որպես կանոն, բացառում է հավելումներն առկա համալիրներում: Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիրը իր հիմնադրումից ի վեր անցած կես դարի ընթացքում «հարստացել» է նոր տարրերով: Մասնավորապես, ներկայումս «Հիշողության պատ» անվանումը կրող 110 մետրանոց պատի վրա 1997-2002 թթ. ընթացքում հայտնվել են Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի, Օսմանյան կայսրության հայաբնակ տարածաշրջանների ու բնակավայրերի 52 անվանում, որոնք խորհրդանշում են այն վայրերի անվանումները, որտեղ ընթանում էր հայերի ցեղասպանությունը: Պատի հետևի կողմում 1997 թ.-ից ի վեր հատուկ խորշերում տեղադրվում են սափորներ՝ լցված հողով այն գործիչների գերեզմաններից, որոնք ցեղասպանությունից առաջ, ընթացքում և հետո հանդես են եկել հայոց պաշտպանությամբ: 1996 թվականից ի վեր կատարվող ծառատունկերի արդյունքում ձևավորվել է 210 եղևնիներով «Հիշողության պուրակը», որի առկայությունը ուղղակիորեն պայմանավորված է Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի շուրջ տեղ գտնող զարգացումներով: Հուշահամալիրի մուտքի սկզբնամասում 1988-1990 թթ. տեղադրվել են խաչքարեր, նվիրված Սումգայիթում, Կիրովաբադում (ներկայումս՝ Գյանջա) և Բաքվում տեղ գտած հայերի կոտորածներին: Հուշապատի դիմացի հատվածում 1990-1992 թթ. հայտնվել են դարաբաղյան կոնֆլիկտի ընթացքում զոհված հինգ ազատամարտիկի գերեզման: Չեկուցման ընթացքում կղիտարկվեն նշված հավելումներից յուրաքանչյուրի խորհրդաբանությունը, թանգարան-ինստիտուտի ղեկավարության ունեցած առկա պլանները և հասարակության ներկայացուցիչների կողմից պարբերաբար ներկայացվող առաջարկները:

ԳՈՀԱՐ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գոհար Ստեփանյանը մշակութային մարդաբան է, ՀԱԻ Արդիականության ազգաբանության բաժնի գիտաշխատող: Նրա գիտական ուսումնասիրությունների կիզակետում են տոնական զարգացումների՝ ներառյալ ավանդական և նորօրյա կենսափուլային ծեսերն ու ավանդական և նորամուտ հանրային տոներն ու հիշատակի արարողությունները, ինչպես նաև գյուղական և քաղաքային սրբային լանդշաֆտը (հանրային և տան սրբեր) և արդի կրոնական պրակտիկաները: Գիտական հետաքրքրությունների մյուս շրջանակը կապվում է գերազանցապես քաղաքային ժամանցի կազմակերպման, ժամանցային պրակտիկաների հետ:

«ՓՈՔՐ ՔԱՂԱՔ, ՄԵԾ ՍԵՐ». ՔԱՂԱՔ-ԸՆՏԱՆԻՔԸ ՇՈՒՇԻԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ

Ուրբանիստական հետազոտությունները երկար ժամանակ հիմնականում շրջանցել են փոքր քաղաքները՝ համարելով դրանք քաղաքային «ուրիշներ»՝ գլոբալ մեգապոլիսների ֆոնին, որոնք ավելի շուտ պատմում են այն մասին, թե ինչպիսին չպետք է լինեն քաղաքները, քան այն մասին, թե ինչպես է զարգացել ուրբանիստիկայի մասին պատմությունը (Bell 2009): Քաղաքային մի «ուրիշ» է և Շուշին, որն իր իսկ բնակիչների կողմից արդեն բնորոշվում է որպես փոքր քաղաք՝ անկախ փոքր քաղաքներին տրվող առ այսօր հակասական սահմանումներից: Իսկ 20-րդ դարասկզբի խոսույթում այն հաճախ էր որակվում որպես «Կովկասի փոքրիկ Փարիզ»՝ նկատի ունենալով նախևառաջ Շուշիի՝ առևտրի, արհեստագործության և մշակույթի կենտրոն լինելը: 1992 թ. մայիսի 9-ից հետո, անցնելով հայկական ուժերի վերահսկողության տակ, Շուշին դարձավ տուն՝ իսիստ տարասեռ (ընտանեկան/ազգակցական, բնակավայրային և այլ ընդհանրություն չունեցող) նորաբնակների համար, որոնք կազմեցին քաղաքի բնակչության մեծամասնությունը (Դաբադյան, Գաբրիելյան 2004): 2020 թ. արցախյան պատերազմից հետո նրանց հիշողության պատումներում արդեն Շուշին ներկայանում է որպես քաղաք-ընտանիք՝ ցուցաբերելով մի շարք գծեր, որոնք, որպես կանոն, հատուկ են համարվում փոքր քաղաքներին: Շուշիի համար տիպական ընտանեկան/մարդկային չափումն զգացնել է տալիս քաղաքը որպես սեփական երեխա ընկալելուց մինչև քաղաքային տարածության ընտանեկան մարկերների արդիականությունը, որն իր՝ հաճախ զգայացունց արտահայտությունն է գտնում շուշեցիների քաղաքային պատումներում:

ՀԱԿՈՒ ԶՈՒԱՔՅԱՆ

Պատմ. գիտ. դոկտոր. գլխավոր գիտաշխատող ԳԱԱ Հնագիտության և ազգագրության հիմնարկին մէջ և արեւմտահայերէնի դասախօս Պետական համալսարանի (համատեղությամբ): Ունի լեզուագիտական-բարբառագիտական, ազգագրական-բանագիտական, պատմագիտական և սիիւռքագիտական աւելի քան 50 աշխատութիւն, 6-ական գիրքերէ բաղկացած արեւմտահայերէնի դասագիրքերու երկու շարք և քանի մը տասնեակ գիտական յօդուածներ, իր հետաքրքրութիւններու բնագաւառին նիւթերը հանրամատչելի եղանակով առցանց ու թղթային մամուլին մէջ ներկայացնող յօդուածներ և սոցալտրասպաշտ էջեր: Լայն կապեր ունի Պէյրութի Հայկագեան համալսարանի և Սիիւռքի կրթական շրջանակներու հետ:

ԼԱԹԱՔԻԱ ՔԱՂԱՔԸ 1840-1920 ԹԹ.

Լաթաքիան, Միջերկրականի արեւելեան ափին, հնագոյն բնակավայր է՝ փիւնիկեան Ռամաթան: Մելեկեաններու օրով, Ք. Ա. 4-րդ դարուն կը վերանուանուի Լաոդիկէ: Անոր տիրած են Տիգրան Մեծը, հռոմէացիները, ապա մէջընդմէջ՝ բիւզանդացիները, օմայաւանները, արբասեաններն ու ֆաթիմեանները, յետոյ՝ սելճուքները, իսլամականները, էյեուպեաններն ու մեմլուքները, իսկ 1512-էն ետք մինչեւ 1918՝ Օսմանեան պետութիւնը:

Լաթաքիան երբեք չէ կորսնցուցած իր նշանակութիւնը իբրեւ վարչական կեդրոն և նաւահանգիստ, թէև ազգաբնակչութիւնը կրած է մեծ փոփոխութիւններ: 19-րդ դարու սկիզբը ան իսլամական քաղաք էր, ուր

չնչին փոքրամասնություն դարձած էին յոյներն ու հայերը: Իսլամներու մէջ տիրապետող տարր էին սիւննի արաբները, քիւրտերը, թուրքմէնները: Լրիւ իրաւագուրկ էր այեւի տարրը, որ չունէր նոյնիսկ միլլէթի կարգավիճակ:

Լաթաքիոյ վրայ մեծ ազդեցութիւն ունեցաւ Եգիպտոսի Իպրահիմ Փաշայի 1932-1940 թուականներուն տեսած իշխանութիւնը, երբ քրիստոնէաները կրցան տեղ գրաւել քաղաքի եւ նաւահանգիստի կառավարման, մաքսատուներուն ու դատարանին մէջ, համահաւասար կերպով օգտուեցան առեւտուրի պայմաններէն: Քաղաքին եւ շրջակայ գիւղերուն մէջ գործեցին լատին եւ ամերիկեան երիցական միսիոնարութիւնները, որոնք իրենց կրթական, առողջապահական, ընկերային եւ մշակութային գործունէութեամբ փոփոխութիւններ բերին լաթաքիացի մարդու ընկալումներուն եւ յարաբերութիւններուն մէջ: Ձեւաւորուեցան բարեկարգ թաղամասեր, փոփոխութիւններ նկատուեցան կենցաղին եւ տարագին մէջ, զարգացան ծովափնեայ զբօսարանները: Նոյն շրջանին այստեղ կը գործէին Ամերիկայի Միացեալ Նահանգներու, Ռուսաստանի, Ֆրանսայի, Անգլիոյ, Իտալիոյ հիւպատոսութիւնները: Քաղաքը դարձաւ Պէյրութի կուսակալութեան մութասարիֆութեան կեդրոն: 1870-էն հոս հաստատուեցաւ ֆրանսական ծխախոտի ընկերութիւնը: Պետական պաշտօնեայի եւ վաճառականի հանգամանքով այստեղ երեւցան զմիւռնացի եւ պոլսեցի յայտնի հայեր, որոնք մեծ դեր ունեցան քաղաքի եւ շրջաններու առաքելական եկեղեցւոյ հաւատարիմ մնացած հատուածը կազմակերպելու, Երուսաղէմի պատրիարքութեան պատկանող Հոգեւոր տեսուչ վարդապետներուն Սոյ կաթողիկոսի փոխանորդական հանգամանք շնորհելու փաստին մէջ: Հայոց թաղամասը Հոգեւորունն էր, որ մինչեւ այսօր ալ տեղացիներու կողմէ կը ճանչցուի Քիտուն անունով:

Լաթաքիա գիւղատնտեսական միջավայր ունէր: Մութասարիֆութեան մաս կը կազմէին բազմաթիւ հայկական, յոյն-հոռոմ, թուրքմէն, քիւրտ, պառուիթ եւ սիւննի արաբ գիւղեր: Գիւղացիութեան ճնշող մեծամասնութիւնը հողագուրկ էր, կ'աշխատէր աւատապետներու կալուածներուն մէջ իբրեւ մարապա (քառորդով): Գիւղական հումքերը կը հաւաքուէին Լաթաքիա:

Լաթաքիոյ պատմութեան մէջ առ այսօր հայերու առնչութեամբ երկու դէպք կը մնայ բնակիչներու յիշողութեան մէջ. Քեսապի 1909-ի աղէտը, երբ շուրջ 7000 քեսապցիներ հատելով կուսակալութեան սահմանը ծովու եւ ցամաքի ճամբով ապաստանեցան Լաթաքիա՝ արժանանալով անհրաժեշտ հոգածութեան, ապա՝ 1915-ի տարագրութիւնը, երբ Լաթաքիոյ եւ մութասարիֆութեան բոլոր հայերը տարագրուեցան Սուրիոյ խորերը, իսկ վերապրողները միայն 1920-ին վերադարձան իրենց տուն ու տեղին:

ՉԱՐՈՒՀԻ ԿԵՎՈՐԿՈՎԱԿ

Չարուհի Կևորկովան ստացել է բակալավրի աստիճան Հայաստանի ամերիկյան համալսարանի Լեզու ու հաղորդակցություն բաժնից: Աշխատում է Հայաստանի ամերիկյան համալսարանում որպես դասախոսի օգնական: Չարուհու հետազոտությունները կապված են բանավոր պատմության միջոցով իրերի պատմությունների հավաքագրման հետ:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆԱԿ

Ձեկույցը անդրադառնում է հետսովետական Հայաստանի կոնտեքստում իրերի պատմումներին: Ժամանակակից կապիտալիստական աշխարհում, որտեղ անձնականությունը չափազանց խրախուսվում է, սովետական իրերը կորցրել են իրենց վաղեմի սիմվոլիզմը: Բայց, այնուամենայնիվ, դրանք շարունակում են շրջապատել մեզ:

5-ԻԴ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԵՂԱՆՎԱՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԵՎ ՈՉ-ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ԱՐՄԵՆ ՍԱՊԱՐՈՎ

Արսեն Սապարովը կրթություն է ստացել Բուդապեշտի Կենտրոնական Եվրոպական համալսարանում և միջազգային հարաբերությունների դոկտորի կոչում է ստացել Լոնդոնի տնտեսագիտության և քաղաքական գիտությունների դպրոցից (LSE): Նա եղել է ֆրանսիական CNRS-ի և Միչիգանի համալսարանի հետդոկտորանտ, որտեղ չորս տարի դասավանդել է Ռուսաստանի և Կովկասի պատմություն, որի ընթացքում հրատարակել է «Հակամարտությունից մինչև ինքնավարություն Կովկասում. Խորհրդային Միությունը և ստեղծումը. Աբխազիա, Հարավային Օսիա և Լեռնային Ղարաբաղ» (Routledge 2015): Այժմ նա Ծարժայի համալսարանի միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ է, ԱՄԷ: Հետազոտական հետաքրքրությունները ներառում են խորհրդային ազգային քաղաքականությունը, Ռուսաստանի արտաքին քաղաքականությունը և էթնիկ հակամարտությունը Կովկասում: Վերջին ակադեմիական հրատարակումները ներառում են. «Վիճարկվող տարածքներ. տեղանունների և խորհրդանշական լանդշաֆտի օգտագործումը ինքնության և օրինականության քաղաքականության մեջ Ադրբեյջանում» Կենտրոնական Ասիայի ակադեմիական ամսագրում, 2017, հ. 36:4 (“Contested spaces: the use of place-names and symbolic landscape in the politics of identity and legitimacy in Azerbaijan” in *Central Asian Survey*, 2017, Vol 36:4) և «Ընդունելիի սահմանների վերանայում. ազգային (ականության) վերածնունդը Խորհրդային Հայաստանում և Մոսկվայի արձագանքը» Եվրոպայի Ասիայի ուսումնասիրություններ 2018, հ. 70:6 (“Re-negotiating the Boundaries of the Permissible: The National (ist) Revival in Soviet Armenia and Moscow’s Response” in *Europe Asia Studies* 2018, Vol. 70:6.):

ՆԵԼԼԻ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

Նելլի Մանուչարյանը 2014 թ.-ից աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և Ազգագրության ինստիտուտի Արդիականության մարդաբանության բաժնում որպես կրտսեր գիտաշխատող և ասպիրանտ: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում են ինքնության կառուցման գործընթացները Խորհրդային Հայաստանում 1920-1953 թվականներին: 2016-2017 թվականներին Նելլին եղել է Կարնեգի կրթաթոշակակիր Հարվարդի համալսարանի Դևիսի ռուսական և եվրասիական հետազոտությունների կենտրոնում (NCEEER):

«ՏԵՂԱՎԱՆՎԱԾ» ՏԵՂԱՆՈՒՆԵՐԸ ԽՈՐՀՐԳԱՀԱՅ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ

Տեղանվանաբանական ուսումնասիրությունների շրջանակը մշտապես ընդլայնվում է՝ ընդգրկելով սոցիոլոգիականների, մշակութային աշխարհագրագետների, մարդաբանների, պատմաբանների, ուրբանիստների և այլ գիտական հետաքրքրության ոլորտներ: Տեղանունները քաղաքային տարածության մեջ պարզապես վերացական անուններ չեն, այլ նաև ներկայանում են որպես հասարակություն-իշխանություն հարաբերությունների մի համակարգ, որի միջոցով ձևավորվում է քաղաքային ինքնությունը: Տեղանունների հետազոտությունների մի շարք ուշադրության է հրավիրում տեղանունների և իշխանության կապի վրա (Berg L., Vuolteenaho J., 2009): Մյուսները ընդգծում են տեղանունների կարևորությունը՝ որպես ազգաշինության և պետականության ձևավորման ռազմավարություն, ցույց տալով, թե ինչպես են իշխանությունները ստեղծում տեղանունների անվանարկման նոր մեխանիզմներ՝ ներկայացնելու պատմության և ազգային ինքնության կոնկրետ գաղափարներ (Cohen S., Kliot N., 1992; Azaryahu M., Kook R., 2002): Այնուամենայնիվ, քիչ ուսումնասիրություններ են արվել կոմունիստական վարչակարգերում իշխանության և տեղանունների անմիջական կապի վերաբերյալ: Սոցիալիստական քաղաքի

ուսումնասիրությունները ավելի շատ հակված էին կենտրոնանալու խորհրդային տեղանունների ֆորմալ և տեղեկատվական ասպեկտների վրա, և ավելի քիչ ուշադրություն է դարձվել տեղանուններին՝ որպես քաղաքային տարածքում կոմունիստական/սոցիալիստական գաղափարախոսության իրականացման հիմնական համակարգի: Հայաստանում բոլշևիկյան իշխանության հաստատմամբ փողոցների անվանափոխության/անվանադրման լայնամասշտաբ գործընթաց սկսվեց: Նոր ռեժիմը ինստիտուցիոնալացնելու նպատակով իշխանությունը քաղաքային լանդշաֆտն օգտագործեց Խորհրդային Հայաստանի քաղաքացուն ներկայացնելու կոմունիստական գաղափարախոսությունն ու արժեքները: Քաղաքական ենթատեքստ պարունակող փողոցները շուտով խորհրդային վարչակարգի համար քարոզչության մի ձև դարձան: Փողոցների անվանափոխությունը դարձավ Խորհրդային Հայաստանում պետականաշինության և ինքնության կազմավորման գործընթացների հիմնական գործիքներից մեկը:

Այս համատեքստում հետաքրքրական է զուգահեռաբար ընթացող քաղաքաշինության մեկ այլ գործընթացի՝ 1920-ականների կեսից արևմտահայության համար Երևան քաղաքին կից կառուցվող ավանների անվանադրման, իսկ ավելի ուշ այդ նույն ավաններին նաև քաղաքային թաղամասի կարգավիճակ շնորհելու խորհրդային իշխանության քաղաքականությունը: Գործընթացը հետաքրքիր էր նախ նրանով, որ այն ընթանում էր Հայոց ցեղասպանությունը վերապրած հայ ընտանիքների հայրենադարձությունը սպառնալից ծրագրի քաղաքականության շրջանակներում, ինչպես նաև, որ այդ ավաններ/թաղամասերը պետք է կրեին Արևմտյան Հայաստանի բնակավայրերի անվանումները՝ դառնալով այդ տեղանունների կրկնանունները: Այս կրկնանունները կամ «ճամփորդող/տեղահանված» տեղանունները կրող այդ բնակավայրերից մի քանիսի քաղաքաշինական ծրագրերը մշակվել են Ալ. Թամանյանի կողմից: Հոգվածում փորձ է արվելու ներկայացնել այս նոր ավանների/թաղամասերի անվանադրումը խորհրդային իշխանության քաղաքականության, ինչպես նաև կենտրոն-ծայրամաս քաղաքային ինքնության սահմանների առանձնահատկությունների դիտանկյունից:

ՆԻԿՈՒ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Նիկոլ Մարգարյանը մշակութային, սոցիալական մարդաբան է:

1993-ից մինչև հիմա աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Գիտաշխատող է, պատմ. գիտ. թեկնածու: Ունի 35 տարվա դաշտային ազգագրական հետազոտությունների փորձառություն, մասնակցել է շուրջ 60 տարբեր հետազոտական ծրագրերի:

Դասախոսել է Գյումրիի Իմաստասեր Անանիա Ծիրակացի (2000 - 2005) և Երևանի պետական համալսարաններում (2005-2018): ԵՊՀ-ի դոցենտ է:

Մասնագիտական հետաքրքրության ոլորտներն են՝ անունների մարդաբանություն, ոչ վերբալ հաղորդակցություն, գենդերային մարդաբանություն, ենթա և հակամշակույթների ուսումնասիրություն, գլոբալացման մշակութային առումներ:

ԷՐԳՕՆԻՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՐԲԱՆՕՆԻՄՆԵՐ. «ՊԱՅՔԱՐ» ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԴՇԱֆՏԸ ԱՆՎԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Կազմակերպությունների և ձեռնարկությունների անվանումները (Էրգոնիմներ), բացի իրենցով կոչված հաստատությունների գործունեության բնույթի, մատուցվող ծառայությունների կամ սեփականատերերի մասին տեղեկատվություն փոխանցելուց, իրականացնում են քաղաքային լանդշաֆտի տարբեր հատվածները նշանակելու անուղղակի գործառույթ, ինչի շնորհիվ այդ հատվածները դառնում են ճանաչելի, նշանակալի և հիշատակելի՝ Էրգոնիմների միջոցով: Էրգոնիմների գործառույթների նմանօրինակ ընդլայնումը, սակայն, սահուն գործընթաց չէ, քանի որ քաղաքային լանդշաֆտը զբաղեցնող

տարածքները՝ փողոցներ, պուրակներ, այգիներ, հրապարակներ, թաղեր և այլն, սովորաբար արդեն ունեն պաշտոնական անվանումներ, որոնց հետ էրգոնիմները ստիպված են մտնել մրցակցության և պայքարի մեջ: Քաղաքային լանդշաֆտը նշանակելու համար այդ մրցապայքարը անվանագիտական հետազոտության համար ուշարժան թեմա է, հատկապես այնպիսի հարցադրումների պատասխաններ ստանալու առումով, թե ինչպե՞ս և ինչո՞ւ են որոշակի կարգի երևույթների անվանումները (դիցուք՝ ձեռնարկությունների ու կազմակերպությունների անվանումները) դառնում այլ կարգի (դիցուք՝ փողոցների, պուրակների, թաղերի, հրապարակների ու այգիների) երևույթների անվանումներ: Բացի այդ, չնայած անվանագիտության մեջ տարբեր ուսումնասիրողներ նշել են օնիմների զանազան հավելյալ գործառույթների մասին, դրանց կարգային տեղափոխությունների հանգամանքը, սակայն, առանձնահատուկ չի դիտարկվել:

Էրգոնիմների օգնությամբ ոչ ձեռնարկատիրական օբյեկտների և տարածքների նշանակման փաստերը արժանի են ուսումնասիրության առարկա դառնալու առհասարակ քաղաքային հետազոտությունների համար, քանի որ դրանք ակներև կերպով վերաբերում են քաղաքների ուսումնասիրության մի շարք կարևոր ասպեկտների, ինչպես օրինակ՝ քաղաքային տարածքների նշանային յուրացումը, քաղաքային տարածքներում կողմնորոշվելու և հաղորդակցվելու խնդիրները, քաղաքային տարածքները անվանակոչելու պետական ու տեղական իշխանությունների քաղաքականության արդյունավետությունը, նշանային և անվանական հարթությունում քաղաքները նկարագրելու անհրաժեշտությունը: Թվարկված առումներով հայաստանյան քաղաքների վերաբերյալ ֆունդամենտալ ուսումնասիրությունները բացակայում են: Առանձին և փոքրաթիվ գիտական հրապարակումներում քննարկվում են քաղաքային տոպոնիմիկայի հետխորհրդային փոխակերպման միտումների և ինքնության հետ կապված կարևոր հարցեր (Լ. Աբրահամյան, Ա. Սափարով, Ս. Աբրահամյան), սակայն վերը թվարկված առումները հասկանալի պատճառներով քննության չեն արժանացել և, ինչպես ասում են՝ կարոտ են ուսումնասիրության: Ասվածից իհարկե չի հետևում, որ սույն փոքրածավալ հետազոտության մեջ մենք հավակնում ենք ներառել և քննության ենթարկել հիշատակված բոլոր առումները: Ինչպես արդեն ակնարկվել է սույն հոդվածի նախաբանում՝ հոդվածի նպատակն է էրգոնիմների գործառույթների ընդլայնման եղանակներին ու պատճառներին անդրադառնալը, որին զուգահեռ մասնակի անդրադարձ կլինի իբրև հետևանք հանդիսացող հաղորդակցային որոշակի խնդիրների:

ՆԵԼԼԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

Նեղի Կարապետյանը ստպիրանտ է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է կրթության մարդաբանությունն ու 19-20-րդ դդ. ազգագրական լուսանկարները: Աշխատում է Հայաստանի պատմության թանգարանի ազգագրության բաժնում որպես գիտաշխատող:

ԳՊՐՈՑՆԵՐԻ ԱՆՎԱՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ՀԵՏԵՈՐՀՐԳԱՅԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Որպես երկրի համար առաջին քաղաք՝ մայրաքաղաք, երկրում տեղի ունեցող սոցիալական, մշակութային, տնտեսական և քաղաքական փոփոխությունները իրենց դրոշմն առաջին հերթին թողնում են հենց Երևանի մշակութատարածքի վրա: Այդ փոփոխությունների ամենամեծ ալիքը դրսևորվեց ԽՍՀՄ-ի փլուզումից հետո՝ ազգային պետության ձևավորման ճանապարհին: Այստեղ փոփոխությունների առաջին դրսևորումները տեսնում ենք հանրակրթական դպրոցների շուրջ՝ թե՛ որպես քաղաքի ճարտարապետական կերպարի բաղկացուցիչներ, և թե՛ գիտելիքի ու գաղափարախոսության շրջանառողներ: Սույն զեկույցում դիտարկվելու է դպրոցների անվանակոչության և

անվանափոխությունների շարժընթացը հետխորհրդային Երևանում: Փորձ է արվելու առանձնացնել մի քանի հիմնական միտումներ՝ միաժամանակ ուշադրություն հրավիրելով ընդհանուր միտումներից շեղվող առանձին օրինակների վրա: Ընդհանուր առմամբ սկզբունքը կարծես թե մեկն է՝ խորհրդային գաղափարախոսության և «հերոսների» փոխարինումը ազգային գաղափարախոսությամբ և «ազգային հերոսներով»: Միտումներից մեկը հեղափոխական ու խորհրդային գործիչների անունները ազգային-ազատագրական շարժման, Արցախյան պատերազմների մասնակիցների, ազգային հերոսների, ռազմական և քաղաքական առաջնորդների անուններով փոխարինելն է: Մեկ այլ միտում է հայ գրողների, արվեստագետների անուններով (այդ թվում սփյուռքահայ) դպրոցներ անվանակոչելը: Երևանյան դպրոցների պարագայում փոքրաթիվ են առանձին բարերարների անուններով անվանակոչվածները: Եվ այնուամենայնիվ, մի շարք դպրոցների պարագայում «խորհրդային հերոսները» չենթարկվեցին ընդհանուր միտմանը և, որոշ դեպքերում նաև իրենց կիսանդրիներով, երևանյան կրթամշակութային և ճարտարապետական լանդշաֆտի մաս են կազմում: Չեկոյցի նյութը հիմնված է պատմական, արխիվային նյութերի և դաշտային հետազոտություններից ստացված տվյալների համադրման և վերլուծության վրա:

ՀՈՒՐԻ ՓԻԼԻՊՊՈՍԵԱՆ

Հուրի Փիլիբոսյանը Լոնդոնի Գոյդամիթս համալսարանի Սոցիալական մարդաբանության մագիստրոս է: Նա գիտաշխատող է Բանալոր պատմության նախագծում, որը քարտեզագրում է ցեղասպանության հետքերը և հիշողությունները Հայաստանի քաղաքային լանդշաֆտում: Հուրին նաև Hi Haleb - Հայ Հալեպ-ի համահիմնադիրն է:

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՆԵՐԻ ՔԱՐՏԵԶԱԳՐՈՒՄ ՀԱԼԵՊՈՒՄ

Hi Haleb (Հայ Հալեպ)-ը թվային հարթակ է, որը ստեղծվել է Հուրի Փիլիբոսյանի, Սադաթի Բազիլի, Հարութ Մարտիրոսեանի և Ռաջնի Ավագյանի կողմից: Hi Haleb-ի նպատակն է հավաքել, արխիվացնել և հիշել Հալեպի հայկական ժառանգությունը: Թիվերում հայկական խանութների քարտեզագրման աշխատանքները շարունակվում են, և մենք պատմություններ և տեղեկություններ ենք հավաքում Թիվերում հայերի գոյության մասին: Թիվերը Հալեպի առաջին թաղամասերից է, որը 20-րդ դարասկզբին խիտ բնակեցված է եղել հայերով: Կան բազմաթիվ հայկական որբանոցներ, դպրոցներ ու եկեղեցիներ, որոնք կառուցվել են մինչ Հայոց ցեղասպանությունը:

ՃՐԳ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԻ ԿԵՐՊԱՐԸ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ՍԱՅԱՆԱ ՆԱՄՍԱՐԱԵՎԱ

Սայանա Նամասարանյան Քենթրիջի համալսարանի մոնդոլական և ներքին սախական հետազոտությունների բաժնի ախագ գիտաշխատող է, որն աշխատում է ESRC-ի կողմից ֆինանսավորվող «Ռեսուրսների սահմաններ. անդրասահմանային սախական գետի ջրային կառավարում» ծրագրի վրա: Սանկո Պետերբուրգի համալսարանի սինոլոգիայի բաժնին ախարտելուց հետո նա ստացել է համեմատական ազգագրության մագիստրոսի կոչում Չենչիի ազգային համալսարանում (Թայպեյ): Արևելագիտության ինստիտուտում (Մոսկվա, Ռուսաստանի գիտությունների ակադեմիա) պաշտպանել է նախասարդի Չինաստանի քաղաքական և մշակութային պատմության վերաբերյալ թեկնածուական թեզը, գիտական պաշտոններ է զբաղեցրել Մաքս Պլանկի անվան Սոցիալական մարդաբանության ինստիտուտում (Հալլե, Գերմանիա) և որպես դասախոս դասավանդել է Բեռնի (Շվեյցարիա) համալսարանի Կրոնների և Կենտրոնական Ասիայի ուսումնասիրության ինստիտուտում: Իր ախարտելիական կարիերայի ընթացքում նրա հետազոտական հետաքրքրությունները ընդգրկել են

մոնոդոլական և սինդրոգիայի, բուլյաթական սիյուռքների և ազգակցական հարաբերությունների, մայրցամաքային գաղութատիրության և սահմանագիտության թեմաների լայն շրջանակ՝ հատուկ ուշադրություն դարձնելով սահմանամերձ քաղաքներին և չին-ռուսական սահմանի երկայնքով սահմանային տարածքներին: Ես դատավանդում է Սոցիալական մարդաբանության ամբիոնում «Սահմանները և սահմանային երկրները Հյուսիսային Ասիայում» դասընթացը Inner Asia ամսագրի համար:

ՎԻԿՏՈՐԻԱ ՎԱՍԻԼՅԱՆ

Վիկտորիա Վասիլյանը ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող է, արվեստաբան, հնագետ, պ.գ.թ., Հայաստանի ամերիկյան համալսարանի և Ավանդական բժշկության համալսարանի դասախոս և Հայաստանի Ամերիկյան համալսարանում «Հայաստանի 100 հնագիտական հուշարձաններ» ծրագրի ղեկավար:

ՔԱՂԱՔԻ ԿԱՆԱՑԻ ԿԵՐՊԱԲԸ. ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿԱՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ

Հասարակության մասին գաղափարները գրեթե միշտ էլ դրսևորվում են անհատական կերպարների միջոցով: Հասարակությունը կազմող մարդիկ գրեթե միշտ էլ կարիք են գգում նախահայրերի, հերոսների: Մեծ, նշանավոր մարդկանց դերերից մեկը այդ պահանջը լրացնելն է: Մարդակենտրոնությունը (անտրոպոմորֆիզմը) արվեստում ի սկզբանե հին հունական մշակույթի անբաժանելի մասն էր: Անձնավորումների ծագումն ինքնին մնում է անհասկանալի: Ընդունելով ավանդական դասակարգումը որպես բնական երևույթներ (օրինակ՝ Երկիր, Երկինք, Գետ), վայրեր (օրինակ՝ Տարածաշրջան, Երկիր, Քաղաք), ժամանակ (օրինակ՝ ամիս, կյանքի ժամանակ, Մեզոն), հույզեր (օրինակ՝ Մեր, Վախ), քաղաքական հասկացություններ (օրինակ՝ Հաղթանակ, Ժողովրդավարություն, Պատերազմ) և այլն, դրանց աստվածացման և դրանց ծագման վերաբերյալ հարցը մնում է բարդ խնդիր: Քաղաքը որպես մարդու կերպարով անձնավորում առաջին անգամ ծագեց հելլենիստական արվեստում, սակայն նրա պատկերագրական արմատները առավել վաղ են: Հասարակական բարեկեցությունը կարող է կապված լինել աստվածացված կերպարների հետ, ինչպես Տիխեն կամ պետական իշխանության հաջորդաբար հերոսացած ներկայացուցիչները: Պոլիսը (Քաղաքը) կարելի էր պատկերել որպես արական կամ իգական կերպար, բայց ավելի գերակշռող էր կանացի կերպարը: Քաղաքը կանացի կերպարանքով պատկերելը գրական աղբյուրներում հայտնի է դեռևս արիայիկ ժամանակաշրջանից, իսկ փոքրասիական տարածաշրջանում հայտնի է դեռևս իւթթական և ուրարտական մշակույթից: Քաղաքական կամ սոցիալական տեսանկյունների պատկերման ու իմաստի բազմազանությունը և դրանց համընկնումը աստվածային ոլորտին բնորոշ չէ միայն հելլենիստական ժամանակաշրջանին: Անձնավորումները կերտվել են արվեստագետների կողմից, որոնք նման են հերոսներին կամ կիսաստվածներին՝ հնարավոր է դիտավորյալ կանգնեցնելով աստվածային և մարդկային ոլորտի միջև որպես միջնորդ: Հայաստանի համար այդպիսի հերոսական կերպարներից մեկն էլ ամփոփված է «Մայր Հայաստանի, Մայրաքաղաքի, հերոսի» գաղափարում: Սակայն Քաղաքամոր կերպարը բավականին երկար ճանապարհ է անցել մեզանում մինչև վերածվել է Մայրաքաղաքի կերպարի, սկսած Քաղաքամայր դիցուհիներից, որոնք ներկայացվել են որպես Հայաստանի մարդայնացված կերպար: Քաղաքի կանացի կերպարի սերտ կապը ժողովրդի արական կերպարի հետ արտացոլում է քաղաքային մշակույթի երկիմաստ բնավորությունը: Պոլիսի անձնավորմանը, որը ընկալվում է որպես սոցիալական, աշխարհագրական և քաղաքական լայն և բազմազան երևույթ, կարելի է մոտենալ հնագիտական և գրավոր աղբյուրների վերլուծությամբ: Դասական հեղինակները Քաղաքը հիմնականում սահմանել են որպես համայնք և տարածք՝ մարդկայնացված կերպարով, մինչդեռ նրա անկախությունն ու ազատությունը պարտադիր էին:

ՄԱՐԻԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Մարիամ Ավետիսյանը ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանություն բաժնի մագիստրոս է: Ակադեմիական հետաքրքրություններն են սոցիալական և մշակութային մարդաբանության ոլորտները, մասնավորապես գեղերային ուսումնասիրությունները, քաղաքի մարդաբանությունը, կոնֆլիկտը սոցիալական գիտություններում և միգրացիայի և սփյուռքի ուսումնասիրությունները: Աշխատում է Հայաստանի ազգային կինոկենտրոնում՝ որպես ֆիլմադարանի համակարգող:

ՀԵՏԵՐԿՐԱՇԱՐԺՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՏԵՍԱԿԱՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ՎՐԱ. ՍՊԻՏԱԿ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿԸ

Արդի շրջանում մեծ հետաքրքրություն են ներկայացնում նոր քաղաքների կառուցումն ու վերականգնումն աղետից հետո: Այս հետազոտության թեման է քաղաքի վերակառուցումը աղետից հետո՝ Սպիտակ քաղաքի օրինակը: Սպիտակ քաղաքն ընտրվել է ուսումնասիրության համար Սպիտակի երկրաշարժից հիմնովին ավերվելու պատճառով: Առանձնակի հետաքրքիր էր, թե ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մարդիկ ինչպիսի՞ պատկերացումներ ունեին քաղաքի մասին, ի՞նչ դեր ունեցավ հիշողությունը քաղաքի վերակառուցման մեջ և ինչպե՞ս հավաքական ցանկությունների կատարողը դարձավ մեկ անհատ. ո՞րն էր այդ անհատի դերը նոր քաղաքի կառուցման հարցում, ո՞րն էր քաղաքի՝ նրա տեսլականը: Սպիտակի՝ որպես քաղաքի ընկալումը ձևավորվել է 1960 թ. -ին, երբ խորհրդային շրջանում բուռն թափ էր ստանում Սպիտակի արդյունաբերացումը: Երկրաշարժի նախօրեին այն փոքրիկ, ինքնաբավ արդյունաբերական քաղաք էր: Երկրաշարժից անմիջապես հետո վերակառուցումը քաղաքի նոր տեսլական բերեց, որը ինքնաբերաբար էր, չսլանավորված և նախկին ձևից տարբերվող: Այն միջազգային օգնության համագումարն էր և աշխարհի տարբեր ճարտարապետական դրսևորումների միավորումը: Կարճ ժամանակ անց մարդիկ ցանկանում են վերադառնալ այն քաղաքը, որտեղ ապրել են և այդ ցանկության բարձրաձայնողն ու կատարողը դառնում է Սպիտակի քաղաքապետ Սուրեն Ավետիսյանը: Այս տեսլականները ձևավորեցին «երկու Սպիտակներ», որոնք ունեն տարածական և բովանդակային տարբերություններ: Վերջին տասնամյակում նկատվում է նոր տեսլական, որը նպատակ ունի միավորել այս երկու քաղաքները և նոր ուղղություն զարգացնել:

ՍՈՆԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Սոնա Մնացականյանը աշխատում է իր դոկտորական թեզի վրա Բեռլինի Հումբոլդտի համալսարանում՝ Մլափոնական լեզուների ու գրականությունների բաժնում: Նա նաև Ֆրիդրիխ Շլեգել գրականագիտական դպրոցի անդամ է, որտեղ որպես գիտական ասիստենտ ներգրավված է (Post)Soviet Literary Cosmopolis պրոյեկտի աշխատանքներում: Սոնա Մնացականյանը իր բակալավրի և մագիստրոսի աստիճանները՝ հայ բանասիրություն մասնագիտացմամբ, ստացել է Երևանի պետական համալսարանից:

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԵՆԻ «ԵՐԵՎԱՆ» ՎԵՊԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Զեկույցը քննում է խորհրդահայ գրող Մկրտիչ Արմենի «Երևան» վեպը՝ հաշվի առնելով վեպի ստեղծման ժամանակն ու քաղաքական հանգամանքները: Գրված լինելով 1927-1931թթ.՝ վեպը մի կողմից արձագանքում է Ստալինի կողմից պետական քաղաքականություն հռչակած «Սոցիալիզմ մեկ երկրի սահմաններում» դոկտրինին, մյուս կողմից՝ պարունակում է մտքեր, որոնք հակադրվում են այդ քաղաքականությանը, և կարող էին սովետական ցենզորների կողմից մեկնաբանվել որպես տրոցկիստական: Ուստի զարմանալի չէ, որ 1933 թ. այն արգելվում է, հանձնարարվում հանել

գործածությունից, ինչպես նաև, երբ 1937-ին Արմենին ձերբակալում են, վեպը բազմիցս հիշատակվում է հարցաքննություններում՝ որպես նրա հակասովետական գործերից մեկը:

Այսօրվա հեռվից մեծ է գայթակղությունը պնդելու, որ սա դիմադրություն էր իշխանական հիմնական քաղաքականությանն ու դիսկուրսին: Մակայն վեպի ընթերցումը իր պատմական կոնտեքստում վկայում է, որ եթե անգամ այնտեղ հարցադրվել են որոշ քաղաքականություններ, միևնույնն է, հեղինակը մեծ առումով չի շեղվել սովետական գրողի առջև դրված ստալինյան մարտահրավերից՝ ստեղծել «ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» արվեստ, որը միտված է ծառայելու սովետական ազգաշինության գործին:

«Երևան» վեպով Արմենը մասնակցում է սովետական ազգակառուցման պրոյեկտին: Ինչպիսի՞ն պիտի լինի այդ ազգայինը, ի՞նչ տարրեր պետք է ներառի, ինչպե՞ս պետք է սոցիալիստականը արտահայտություն գտնի ազգայինի մեջ, ինչպե՞ս պետք է ազգայինի նոր ընկալումը համատեղի անցյալն ու ներկան, լոկալն ու գլոբալը: Սրանք հարցեր են, որոնց հետհեղափոխական շրջանում ակտիվորեն պատասխաններ էին փնտրում ոչ միայն գրողները:

ՏԻԳՐԱՆ ՄԻՄՅԱՆ

Տիգրան Միմյանը բանասիրական գիտությունների դոկտոր է, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հատորդակցության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնի պրոֆեսոր:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ. ՀԱԲԻՏՈՒՄ, ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՔԱՂԱՔԻ «ՃԱՐՏԱՐԱՊԵՏ»

Հովհաննես Այվազովսկուն նվիրված այս գեկույցը շարունակում է նրան նվիրված խոսույթը: Մեծ ծովանկարչի մասին քիչ բան չի գրվել, բայց գիտական գրականության մեջ Այվազովսկու՝ որպես «սահմանային» մարդու ֆենոմենը դեռ կարիք ունի նկարագրության, քանի որ նկարիչը եղել է ցարական Ռուսաստանի «կենտրոն»ի (Մանկտ Պետերբուրգ) մշակութային քաղաքականության տարածողներից մեկը: Ապրելով կայսրության «ձայրամասում» (Թեոդոսիա)՝ նա «կենտրոնի» քաղաքակրթության իրականացնողներից էր: Հարկ է նշել, որ գեկույցում Այվազովսկին ներկայացվում է ոչ միայն ցարական մետանարատիվի ներկայացուցիչ, այլ նաև առնվազն երկու մշակույթների՝ հայկականի և ռուսականի կրող:

Այվազովսկու ֆենոմենը նրանում է, որ նա գրագետ տեղավորվում է «վերևի»/«կենտրոնի» հիշողության քաղաքականության մեջ, բնականաբար, նաև իր տաղանդի և ինտելեկտի շնորհիվ: Նկարիչը ենթագիտակցական մակարդակով իրականացրել է հայտնի մեղիամագնատ Կիտ Ռուպերտ Մերդոկի սկզբունքը՝ «Մտածիր գլոբալ, գործիր լոկալ» (Think globally – act locally, 1931): Մեծանուն նկարիչը կերտում է վերազգային (համամարդկային) արժեքներ, իսկ գործելով լոկալ մակարդակում՝ վերափոխում է իր շրջակա միջավայրը, սոցիալական և քաղաքային տարածքը: Պատահական չէ, որ նրա տապանաքարի վրա գրվել է. «Մահկանացուից ծնվածը թողել է անմահ հիշողությունը» [Բարսամով 1962, 145]: Հենց «անմահ հիշողությունը» մատնանշում է նրա ստեղծագործական և քաղաքացիական գործունեությունը:

Չեկույցի նպատակն է նկարագրել Այվազովսկու հարիտուսը, նրա տեղը կայսերական մշակութային և հիշողության քաղաքականության համատեքստում, ինչպես նաև ազգային (ռուսական, հայկական) համատեքստում, ինչպես նաև որպես Թեոդոսիայի ակտիվ քաղաքացի և բնակիչ: Չեկույցում քննարկվելու է հետևյալ դրույթը. Այվազովսկին ոչ միայն շնորհալի նկարիչ էր, այլև «դիվանագետ», իր քաղաքի պատասխանատու քաղաքացի, որն ապրում էր քաղաքի հոգսերով ու խնդիրներով, քաղաքի ժողովրդի ու հայ համայնքի խնդիրներով:

Չեկույցը բաղկացած է երեք մասերից.

Ա. «Այվագովսկին որպես «վերևի»՝ ցարական Ռուսաստանի նկարիչ»,

Բ. «Այվագովսկին որպես ազգային (հայկական) մշակույթի և հիշողության կրող»,

Գ. «Մարդը և քաղաքը. ենթակառուցվածքը և մշակույթը»:

Էնպիրիկ նյութի քննությունից հանգեցինք հետևյալ եզրակացությունների. Այվագովսկին ոչ միայն հանճարեղ նկարիչ էր, այլև գլոբալ մտածող և լոկալ գործող, պրակտիկ քաղաքացի և նկարիչ: Նրա կերպարը վառ օրինակ է այն բանի, թե ինչպես է մարդը փոխում իր սիրելի քաղաքի ենթակառուցվածքն ու մշակութային կյանքը: Ինչպես է նկարիչն ազդել քաղաքի վրա և միաժամանակ քաղաքը մարդու: Նա «կերտել» ու վերափոխել է քաղաքը ուղիղ և փոխաբերական իմաստով: Թեոդոսիան և քաղաքի մերձակա ավերը նրա համար ոգեշնչման և խորհրդանշական կապիտալի աղբյուր էին: Մեծ նկարչին հաջողվում է իր երկերը՝ խորհրդանշական կապիտալը, վաճառել «վերևին», իսկ ձեռք բերված գումարներով, ֆինանսական կապիտալով զբաղվել բարեգործությամբ՝ շենացնելով իր քաղաքը, շրջակա միջավայրը: Այլ խոսքով՝ նա դառնում է նոր արժեքների կերտող ոչ միայն ցարական Ռուսաստանի, այլ նաև իր ժողովրդի համար: Այվագովսկին իր ստեղծագործությամբ և գործունեությամբ Թեոդոսիան դարձրեց ճանաչելի, բրենդ:

Ցարական Ռուսաստանի «ծայրամասի» գեղեցկությունը նա վաճառում է քաղաքական «վերևին», և դա, անշուշտ, իր տաղանդի շնորհիվ: Պատճառներից մեկն էլ այն էր, որ գործառնում էր կայսերական քաղաքականության տրամաբանությամբ:

Էնպիրիկ նյութի քննությունից կարելի է եզրակացնել, որ քաղաքը ծնել է Այվագովսկուն, իսկ վերջինս՝ Թեոդոսիան: Այս «հանդիպումն» այնքան արգասաբեր է եղել, որ դարձել է անդրազգային արժեքներ, արվեստ գեներացնելու նախադրյալ: Այլ կերպ ասած՝ ցարական Ռուսաստանի «ծայրամասի» ներկայացուցիչը գեներացնում էր կայսերական հիշողության քաղաքականության, պատմական հիշողության «կենտրոնական» տեքստերը: Ասվածից ևս մի հետևություն կարելի է անել, որ «կենտրոնը» խիստ հարաբերական հասկացություն է, տաղանդավոր մարդը ինքն իրենով դառնում է «կենտրոն» և սերում «կենտրոնական» տեքստեր՝ մոդելավորելով նորանոր սոցիալական և հանրային տարածքներ, մեր պարագայում Այվագովսկին՝ Թեոդոսիան:

7-րդ ՆԻՍՏ. ԶԱՎԱՔԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ՄԻԽԱՅԻԼ ՆԵՄՅԵՎ

Միխայիլ Նեմցևը ուսումնասիրում է ուշ խորհրդային և հետխորհրդային Ռուսաստանի ինտելեկտուալ պատմությունը և քննադատական տեսությունը: Նրա հետաքրքրությունները ներառում են նաև գաղափարական վերլուծություն, սիրիազիտություն և, ընդհանուր առմամբ, Հյուսիսային Եվրասիայի մարդկային աշխարհագրությունը: Նախկինում աշխատել է որպես քաղաքական հարցազրուցավար, դասավանդել է փիլիսոփայություն և սոցիալական գիտություններ Ռուսաստանի տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններում, այդ թվում՝ Մոսկվայի Սոցիալական և տնտեսական գիտությունների դպրոցում: Համագործակցում է Տյումենի համալսարանի բնապահպանական և սոցիալական հետազոտությունների դպրոցի հետ՝ մարդկության աշխարհագրության և Միբրիի Էկոլոգիական պատմության նախագծի շրջանակներում: Ներկայումս բնակվում է Երևանում:

ԱՐՄԵՆ ՀԱՎՈՐՅԱԼ

Արսեն Հակոբյանը ՀՀ ԳԱԱ ՀԱԻ ավագ գիտաշխատող է:

ՄԱՐԶԵԼԼՈ ՄՈԼԼԻԿԱ

Մարչելլո Մոլիկան ստացել է Ph.D. աստիճան Լյովենի համալսարանի սոցիալական գիտությունների բնագավառում (2005թ.) և Խաղաղության և հակամարտությունների ուսումնասիրությունների եվրոպական դոկտորի աստիճան (2007) Դյուստոյի համալսարանից: Մեսինայի համալսարանի մշակութային մարդաբանության և էթնոլոգիայի դոցենտ է: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում են՝ կրոնական և քաղաքական բռնություն, էթնոկրոնական փոքրամասնություններ, քաղաքական մոբիլիզացիա: Դաշտային աշխատանքներ է կատարել Հյուսիսային Իռլանդիայում, Հարավային Լիբանանում, Արևելյան Թուրքիայում, օկուպացված տարածքներում և Իսրայելում, ինչպես նաև Հարավային Կովկասում: Նա իր աշխատանքները հրատարակել է գրախոսվող գրքերում և ամսագրերում: Քաղաքային մարդաբանության հանձնաժողովի (IUAES) գործադիր քարտուղարն է:

ԴԵՐ ԶՈՐ. ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԵՐԱԿԱՆ

Քննարկման առարկան Դեր Զորն է որպես քաղաք ու սիմվոլ պատերազմական իրավիճակում: Ինչպես են պատերազմական իրավիճակում տեղի ունենում սցիալական փոխակերպումները՝ կապված տարածքի, հիշողության ու պատերազմի հետ: Մեր զեկուցման մեջ մենք քննարկում ենք, թե ինչպես են հայկական քաղաքային մշակութային ժառանգությունը և Դեյր-էլ-Զորի ցեղասպանության հուշահամալիրը, որոնք ունեն ինքնության, պատկանելության և հիշողության հետ կապված բարձր խորհրդանշական նշանակություն, թիրախ դարձան սիրիական պատերազմում՝ վերարտադրելով սոցիալական, քաղաքական պատումներ ու պրակտիկաներ, ինչպես նաև՝ համապատասխան վարքագիծ: Ինչպե՞ս են այս պրակտիկաներն ու պատումները ձեռք բերել անդրազգային չափումներ և դարձել քաղաքական, սոցիալական վերափոխման դերակատարներ: Ահա պատմական համատեքստի քննարկման շրջանակը՝ տարածքը որպես ցեղասպանության ու բռնության վայր, խորհրդանշայնացում և հուշարձանացում, քաղաքային միջավայրի ու հայկական համայնքի կայացումը և վերջապես՝ հիշատակության պրակտիկաներն ու սիրիական պատերազմի բերած արհավիրքները, որը տվյալ դեպքում դրսևորվեց 2014 թ.-ի սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության օրը, Սրբոց Նահատակաց Հուշահամալիրի պայթեցմամբ:

ԱՄԱԼՅԱ ԴԻԼԱՆՅԱՆ

Ամալյա Դիլանյանը ախարտել է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության բաժինը՝ ստանալով մագիստրոսի աստիճան: Ակադեմիական հետաքրքրություններն են առօրեկան մարդաբանությունն ու փոփոխվող միջավայրը:

ՓՈԽԵԼՈՎ ԿՈՂԸ. ԳՐԱՖԻՏԻՆ ԸՆԴԴԵՄ ՊԱՏԵՐԱԿԱՆ

Մարդու կենսագործունեության տարասեռ և բազմաժանր դրսևորումների շարքում գրաֆիտին առանձնանում է իր արագ արձագանքման յուրահատկությամբ: Այն հանդես է գալիս որպես միաձույլ իրողություն՝ ներառելով և՛ տեքստ, և՛ նկար, և՛ տեղեկույթ, և՛ քարոզչություն՝ միաժամանակ չնույնանալով նշվածներից որևէ մեկի հետ, այլ իր վերջնական վիճակում երևակվելով որպես կուռ ներքին բովանդակությամբ և շեշտադրված հայեցակարգով երևույթ:

Ընդ որում, անկախ նրանից՝ արդյոք գաղափարի մեկնարկը կորոնավիրուսի համավարակն է, թե 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ողբերգական պատերազմը, գրաֆիտին արձանագրողի և արձագանքողի կարգավիճակում է: Թերևս ասվածի վկայությունն են, որքան էլ առաջին հայացքից տարօրինակ թվա, թե՛ Վստրեչի կամրջի վրա գտնվող շենքերից մեկի պատին՝ դիմակներով համբուրվող

գույզի գրաֆիտի-նկարը և թե՛ պատերազմի լուռ վկաներ աղբբեջանական «Սմերչի» պայթած մարտագլխիկներին արված #RECOGNIZE_ARTSAKH հեշթեգային գրառումները:

Հետաքրքրականն այն է, որ մի դեպքում մենք գործ ունենք պայմանական ասած մարդածին աղետի՝ պատերազմի, մյուս դեպքում՝ բնության արհավիրքի՝ համավարակին արձագանքելու գրաֆիտի փոխակերպումների հետ: Մի դեպքում հարևան երկրների պատերազմն է, մյուսում՝ ամբողջ աշխարհի կամ մարդկության պատերազմը համավարակի դեմ: Այս երկու պատերազմներում գրաֆիտին հանդես է գալիս որպես խաղարարար, որպես հաշտեցնող և պատերազմը բացառող երևույթ:

Նույն կերպ աղբբեջանական մարտագլխիկի վրա՝ Արցախը ճանաչելու կոչ-գրառումը ներքին բովանդակությամբ հանդուրժողականության և խաղաղության կոչ է, քանի որ միտված է խաղաղ համակեցության ելակետային սկզբունքի ճանաչմանը: Այս տեսանկյունից աղբբեջանական հրետակոծության «հետևանք-մարտագլխիկների» վրա արված գրաֆիտին ինքնին փոխում է նաև հենց ռումբի առաջնային նպատակն ու բովանդակությունը, որը նույնական է պատերազմի և ռազմականացման հետ: Հենց այս ապառազմականացման ու պատերազմի բացառման խորհրդանիշերը վերածվեցին այն մարտագլխիկները, որոնք նկարագարվեցին «բլոնդիկներ» գրառումներով («բլոնդ»՝ մանր միջատ՝ բարբառային): Ըստ էության՝ թե՛ Հովիվուղի «Պապիլոնի» մոտ Ռեյես արվեստի ինստիտուտի ուսանող դիզայների կողմից արված ԼՂ հակամարտության թեմատիկայով պատկերագրությունների և թե՛ Մարտունիում Ա. Բալյանի արած նկարագարողումների մեկնարկային բովանդակությունը արցախյան պատերազմն էր, սակայն գրաֆիտի երկու պարագայում էլ մենք գործ ունենք ապառազմականացման և պատերազմի դեմ քարոզչության դրսևորումների հետ:

ՄԱՐԳԱՐԻՏ ՀՎՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մարգարիտ Հարությունյանը սովորում է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հնագիտության և ազգագրության ամբիոնի մագիստրատուրայի 2-րդ կուրսում: Նրա սկադեմիական հետաքրքրությունները սոցիալական մարդաբանության և պատերազմի մարդաբանության ոլորտներում են:

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՄԱՐԴԱՔԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԻՍ ԲԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Մայրաքաղաքում և մարզերում հաճախ հակասություններ են առաջանում որևէ իրողության շուրջ: Այդ հակասությունները հատկապես ցայտուն արտահայտվում են Սյունիքի մարզում՝ սահմանային իրավիճակով պայմանավորված: 2020 թ.-ի 44-օրյա պատերազմի արդյունքում Գորիսը իր հարակից գյուղերով դարձել է սահմանամերձ: Մեր նպատակն է հասկանալ, թե ըստ բնակիչների ի՞նչ է սահմանը, ինչպե՞ս են փոխվել նրանց ընկալումները, տարածական հիշողությունները, աղբբեջանցիների մասին նրանց պատկերացումները: Նշված հարցերի ուսումնասիրության հրատապությունը բխում է պետություն-քաղաքացի հարաբերությունների շահերից՝ իրողությունները օբյեկտիվ ներկայացնելու և իրատեսական լուծումներ առաջարկելու նպատակով:

Առաջին փոփոխությունը նկատելի է դառնում այն իրողությամբ, որ բնակիչներն իրենք են արձանագրում Գորիսը չորս կողմից շրջափակման մեջ լինելը: Անցյալում, բնականաբար, նման իրողություն չի եղել, այդ իսկ պատճառով բնակիչները համեմատականներ են անցկացնում սովետական ժամանակաշրջանի հետ՝ նշելով, որ անգամ այդ ժամանակ Գորիսում թուրքերը չեն ապրել:

Գորիս-Կապան ճանապարհի 21 կիլոմետրանոց հատվածի որոշ մասեր խնդրահարույց են: Պատերազմի հետևանքով Կուրաթուն և Չանգեղանն Աղբբեջանին հանձնելուց հետո ճանապարհի որոշ հատվածներ անցնում են աղբբեջանական տարածքներով: Այդ հատվածներում էլ աղբբեջանական կողմը սկսեց ցուցանակներ ու դրոշներ ծածանել: Սյունիքում մտահոգվում էին՝ ինչպես են հայկական բնակավայրերն

իրար կապող ճանապարհներն ադրբեջանական դառնում: Մակայն դա հիմնավորվում էր խորհրդային քարտեզներով, քանի որ դեռևս Սովետական միության ժամանակ Ադրբեջանը և Հայաստանը երթևեկում էին նույն ճանապարհով: Մակայն այս փաստը խնդրահարույց է նաև բնակիչների շրջանում: Բնակիչների մեկնաբանությունները սահմանի վերաբերյալ տարբեր են, սակայն շատերն են հաստատում, որ սովետական քարտեզները չեն ստում: Բնակիչների որոշ խումբ դա փաստում է՝ հիշելով այդ տարիներից մանրամասներ, նրանց հիշողությունները ճանապարհի, տարածքների վերաբերյալ:

Այստեղ ի հայտ են գալիս մի շարք խնդիրներ. ադրբեջանական անօրինական արարքների հետևանքով մարդիկ զրկվել են նույնիսկ դեռ խորհրդային ժամանակներից իրենց պատկանող տներից, հողատարածքներից, որի հետևանքով առաջ են եկել ոչ միայն սոցիալական, այլ նաև անվտանգային լուրջ խնդիրներ: Դրանից բացի մարդկանց մի մասը չի կարողանում զբաղվել անասնապահությամբ, որն իրենց հիմնական զբաղմունքն է, ի հայտ է եկել նաև ջրամատակարարման խնդիրը, ինչը հատկապես կապված է Սև լճում ադրբեջանական գինվորականների անօրինական ներկայությամբ: Վերջին շրջանում Գորիս-Որոտան-Շուշուի ճանապարհի վրա ադրբեջանցիների տեղակայումը ավելացրեց մի շարք խնդիրներ այդ ճանապարհի վրա գտնվող գյուղերի համար: Ճանապարհի այլևս անվտանգ չլինելը բնականաբար վախեցնում է բոլորին, հատկապես երբ մարդիկ տարիներ շարունակ երթևեկել են և չեն մտախոգվել: Ճանապարհի երկու կողմերը հարուստ են բուսական և կենդանական աշխարհով, սակայն սահմանների անճշտության պատճառով մարդիկ չեն կարող ճանապարհին կանգնել և որևէ գործողություն կատարել: Այս իրողությունները անմիջական ազդեցություն են ունեցել արդեն սահմանամերձ Գորիս քաղաքում ապրող մարդկանց վրա: Մարդկանց ընկալումները, կարծիքները և հիշողությունները հավաքագրելով կհասկանանք, թե ինչպես են փոխվել քաղաքային իրողությունները, մարդկանց պատկերացումները, ինչպիսի պաշտպանական, կենցաղային, սոցիալական խնդիրներ են առաջացել, ինչպես են փոխվել բնակիչների պատկերացումները ապագայի նկատմամբ, և ինչպես են ձևավորվում այդ ընկալումները մայրաքաղաքից այդքան հեռու գտնվող քաղաքում:

Ց-ԲԳ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԸ և ԿՐՈՆԸ

ՔՆՆԱՐԿՈՂ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂԱՉԱՆՅԱՆ

Ալեքսանդր Աղաջանյանը Ռուսաստանի պետական հումանիտար համալսարանի Կրոնների ուսումնասիրության կենտրոնի պրոֆեսոր է և Երևանի պետական համալսարանի գիտաշխատող: Նրա հետաքրքրությունները ներառում են կրոնը ժամանակակից աշխարհում, մասնավորապես, Ռուսաստանում և հետխորհրդային Եվրասիայում: Նա հեղինակ կամ համահեղինակ է հետևյալ գրքերի՝ «Հասկանալով համաշխարհային քրիստոնեությունը. Ռուսաստան» (“Understanding World Christianity: Russia”), Fortress, 2021); «Հավատքի շրջադարձեր, իմաստի որոնում. ուղղափառությունը և հետխորհրդային փորձը (“Turns of Faith, Search of Meaning: Orthodox Christianity and Post-Soviet Experience”), Peter Lang, 2014; խմբագրել է՝ «Հայ քրիստոնեությունն այսօր. ինքնության քաղաքականություն և սոցիալական պրակտիկա» (“Armenian Christianity Today: Identity Politics and Social Practices”) Ashgate, 2014; «Կրոնը, ազգը և ժողովրդավարությունը Հարավային Կովկասում» ամսագրի համահամբազիր, 2015թ. (“Religion, Nation and Democracy in the South Caucasus”), «Ծովրդ և համայնքը ռուս ուղղափառության մեջ» (“Parish and Community in Russian Orthodoxy”), Վես Միր, 2011, (ռուսերեն); «Արևելյան Ուղղափառությունը գլոբալ դարաշրջանում» (“Eastern Orthodoxy in a Global Age”), Altamira Press, 2005:

ՄԻՄՈՆ ՀՄԱՅԱԿՅԱՆ

Միմոն Հմայակյանը պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ: ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող է: Գիտական հետաքրքրության ոլորտներն ընդգրկում են ուրարտագիտությունը, Հին աշխարհի արվեստի պատմությունը, քաղաքակրթությունների պատմությունը: Շուրջ 150 գիտական հոդվածի հեղինակ է:

ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԿՐՈՆԻ և ԷԹՆԻԿԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՇՈՒՐՁ

Արգիշտիխինիլին ունի երկու միջնաբերդ, որոնցից արևմտյանը գտնվում է Նոր Արմավիր գյուղի տարածքում «Սուրբ Դավիթ» բլրի վրա: Այստեղ գտնվող մատուռը մինչև հիմա ուխտատեղի է: Արևելյան ամրոցը գտնվում է Արմավիր բլրի վրա, որտեղ այժմ էլ կանգուն է Խալդի աստծուն ձոնված Սուսի տաճարը, որի դիմաց ժամանակին կանգնած խաչն ու մատուռը ուխտատեղի էին մինչև 1936 թ.-ը: Երկու ամրոցների միջև և շրջակայքում ժամանակին տարածվում էր Արգիշտիխինիլի քաղաքը: Արևելյան միջնաբերդի դամբարանադաշտի տեղը հայտնի չէ, Արևմտյան միջնաբերդի դամբարանադաշտը գտնվում է Նոր Արմավիր գյուղի տարածքում:

Այստեղ հաշվառված ու պեղված դամբարանների մեծ մասը կարասային թաղումներ են, որոնք Արարատյան դաշտում ի հայտ են գալիս այն ժամանակ, երբ Վազա անվանված այս տարածաշրջանը հայտնվում են Վանի թագավորության կազմում: Հիշատակված թաղման ձևեր, թերևս, պատկանել է այն մարդկանց, որոնց Արգիշտի I արքան, մ.թ.ա. 8-րդ դարում, Խաթեն և Ծուպա մերձեփրատյան երկրներից տեղահանել և վերաբնակեցրել է Էրեբունի և Արգիշտիխինիլի քաղաքներում: Ուշագրավ է, որ այս մարդիկ իրենց ինքնությունն այստեղ պահպանել են մեկ դարից ավելի: Այսինքն՝ Արգիշտիխինիլիում ձևավորվել էր քաղաքային մի համայնք, որն ուներ կրոնական խորն արմատներ, թերևս նաև քրմություն: Վանի թագավորությունում կրոնական անհանդուրժողականության դեպքեր չեն նկատվել, բայց կար պետական կրոնն ամրապնդելու ձգտում: Այս նպատակով Արգիշտիխինիլիում հիմնվում են տասնութ պաշտամունքային շինություններ, որոնց թվում տաճարներ՝ ձոնված Խալդիին, Ուարուբաինիին և Կուեռային: Բացի սրանից՝ Արգիշտի I արքայի անունից կազմվում է մի արձանագիր տեքստ այն մասին, թե քաղաքում ինչ պաշտոնական արարողակարգով պետք է կատարել զոհաբերություններ: Այսպիսով՝ Արգիշտիխինիլիի բնակիչները ապրում էին իրենց յուրահատուկ կրոնական առօրյայով, պետությունը, սակայն, ձգտում էր նրանց ընդգրկել պետական-կրոնական ծիսակարգում և հավատքում:

ՅՈՒԼԻԱ ԱՆՏՈՆՅԱՆ

Յուլիա Անտոնյանը աշխատում է ԵՊՀ-ի Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնում, դոցենտ է:

ԼՈՒԿՅԱՑ ԳԱՂՈՒԹԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ. ՌՈՒՍԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԳՅՈՒՄՐԻԻ, ՎԱՆԱԶՈՐԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԼԱՆԳՎԱՑՑՏՆԵՐՈՒՄ

Ձեկույցը անդրադառնալու է Հայաստանում գաղութականության լուսկյաց գործընթացներին, որոնք դիտարկվելու են ռուսական ուղղափառության ներկայության օրինակով Երևանի, Գյումրիի և Վանաձորի քաղաքային բնակարանում: Կրոնի դերը գաղութացման գործընթացներում միշտ եղել է չափազանց կարևոր և կոշտ՝ ռազմական ու տնտեսա-քաղաքական ուժի հետ մեկտեղ ձևավորելով գաղութային գաղափարական ֆոն և համապատասխան ինֆրակառույցներ: Ռուսական ուղղափառ եկեղեցին Հայաստանում իր ներկայությունը հաստատեց դեռ 19-րդ դարում, ոչ միայն ներթափանցող ռուս վերաբնակիչների՝ հիմնականում գաղութային պաշտոնյաների կրոնական կարիքները հոգալու համար, այլև որպես կայսերական իշխանության սիմվոլ: Խորհրդային միությունը խիստ նվազեցրեց ուղղափառության ներկայությունը Հայաստանում, սակայն անկախության ձեռքբերումից հետո,

հատկապես 2000-ական թվականներին, Պուտինի ռեժիմի ձևավորման ընթացքում նկատվում է ուղղափառության աշխուժացում, հատկապես իր նյութական տեսանկյունի տեսակետից: Չեկոյցում քննարկվելու են ուղղափառ նյութականության գաղութային բնույթն ու վերանորոգված կամ նորակառույց ուղղափառ եկեղեցիների նեո-գաղութային իրականության քաղաքային հենակետերի վերածվելը:

ԼԻԼԻԹ ԳԱՐՐԻԵԼՅԱՆ

Լիլիթ Գարրիելյանը ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ է: Նրա ակադեմիական հետաքրքրությունները սոցիալական մարդաբանության և կրոնի մարդաբանության ոլորտներում են:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԿՐՈՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏՆՔՍՏՈՒՄ (ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Սույն զեկույցի նպատակն է ներկայացնել, թե ինչպես էին տարբեր բողոքական կրոնական ուղղությունները հետերկրաշարժյան շրջանում և Հայաստանի Հանրապետության անկախության տարիներին օգտագործում քաղաքային տարածքը, ինչպես էին քաղաքի նյութական և ֆիզիկական տարածությունները փոխակերպում իրենց նպատակների համար, և ինչ մեխանիզմներ են օգտագործվում այժմ եկեղեցիների սոցալիզացիան և շարունակականությունը ապահովելու համար: Չեկոյցում այս գործընթացները ներկայացվում են բողոքականության երկու կրոնական՝ Ավետարանական և Հիսունական (Պենտեկոստալ) ուղղությունների օրինակով:

ԱՐԱ ԳՈՒԼՅԱՆ

Արա Գուլյանը ազգաբան է, «Հագարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնի» նախագահը: Այս անգամ նրա հետազոտության թեման է Հայաստանում ժողովրդական քրիստոնեությունը:

ՉՈՐՍ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԳՅՈՒՄՐԻՈՒՄ

Գյումրիի ինձ հայտնի չորս սրբավայրերից երեքը գտնվում են «Ձորի բողազ» թաղում, իսկ չորրորդը՝ «Տեքստիլ» թաղամասում: Չորսից միայն «Ձորի բողազի» երկու սրբավայրերը անուն ունեն՝ «Սուրբ Մինաս» և «Մեռել հարոց»: «Սուրբ Մինաս» տնակի տեղում 2013 թ. մատուռ են կառուցել: Տարբերելու համար ժողովրդականություն վայելող եկեղեցին և ժողովրդական սրբավայրը, գատենք ժողովրդական և ժողովրդականություն բառերի իմաստային գործածումը: Դրա համար կողմնորշիչ կհանդիսանա սրբավայրի ծագումը: Ժողովրդական սուրբ անվանենք այն սրբավայրերը, որոնք եկեղեցին չի հիմնադրել: Դրանց շարքին կարելի է դասել նաև եկեղեցական ավերված շինությունները, որոնք պաշտոնապես չեն գործում, բայց գործում են շնորհիվ հավատացյալների այցելությունների, այսինքն՝ վերահիմնադրվել են որպես ժողովրդական սրբավայրեր:

Սրբի պատկանելիության կամ նրան սպասարկելու իրավունքի հարցը կարող է վիճարկելի լինել, ինչպես «Տեքստիլի» սրբավայրինը: Սուրբը կարող է որևէ ընտանիքի սեփականությունը չլինել, ինչպես «Ձորի բողազի» անանուն սրբավայրը: Բանասացը գիտի, որ դա իրենց ընտանիքի Սուրբն է՝ տան հովանավորը, բայց ոչ սեփականությունը:

Հավատացյալը ժողովրդական սրբավայրը չի հակադրում եկեղեցուն: Նրա առջև սրբավայրի ընտրության խնդիր ծագում է՝ կախված ուխտի պայմաններից և արարողության կարևորությունից: Հայաստանյաց առաքելական եկեղեցին նույնպես չի հակադրում ժողովրդական սրբավայրը եկեղեցուն: «Մեռել հարոց» Սրբի նոր շինությունը քահանան օժել է:

Բանասացները չեն օգտագործում սրբավայր բառը, ասում են՝ Սուրբ: Տեղն էլ է Սուրբ, գիրքն էլ՝ Սուրբ, կառուցված տնակն էլ է Սուրբ: Տարեց կինը երագում լուսավոր գնդակ է տեսնում և ասում է, որ ինքը Սրբին է տեսնում:

Սուրբը չի կարելի տեղաշարժել: «Մեռել հարոց» Սուրբը (ավետարանը) տարել են, որպեսզի հիվանդի գլխի տակ դնեն: Սուրբը հայտնվել է երագում և սպառնացել, ավետարանը հետ են տարել ու դրել տեղը: Հիմա Սուրբը իր տեղում չէ: Ժառանգներից մեկը ավետարանը տարել է Ռուսաստան, բայց տնակը կա, և հենց դրան էլ Սուրբ են ասում:

Տվյալ դեպքում հարց է ծագում՝ արդյոք բանասացը չի գիտակցում, որ իր խոսքում ակնառու իրարամերժ փաստեր կան, թե՛ հետազոտողը չի հասկանում ժողովրդական Սրբի էությունը և այդ պատճառով է հակասություն տեսնում: Բանասացի խոսքից երևում է, որ նա հակասություն չի տեսնում և հետազոտողը ստիպված է գոնե ենթադրական վարկածով պատասխանել իր հարցին:

9-րդ ՆԻՍՏ. ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՔԱՂԱՔ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ԼՈՐԻ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Լորի Խաչատուրյանը Կոռնելի համալսարանի հնագիտության և մարդաբանության պրոֆեսոր, Մերձավորարևելյան ուսումնասիրությունների բաժնի դոցենտ է: Իր հետազոտություններում նա օգտագործում է հնագիտության և ազգագրության մեթոդները՝ ուսումնասիրելու մարդկանց, քաղաքականության և առարկաների և լանդշաֆտների նյութական աշխարհի փոխհարաբերությունները՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հայաստանին և Հարավային Կովկասին: Դոկտոր Խաչատուրյանը շատ է գրել վաղ կայսրությունների հնագիտության մասին և հեղինակ է «Կայսերական նյութ. Հին Պարսկաստան և կայսրությունների հնագիտության» (2016) գրքի:

Նրա ընթացիկ հետազոտությունները կենտրոնանում են ժամանակակից ավերակների և 20-րդ դարի հնագիտական վայրերի վրա: Դոկտոր Խաչատուրյանը նաև Կովկասյան ժառանգության պաշտպանության կազմակերպության (Caucasus Heritage Watch) ղեկավարներից է, այն հետազոտական նախաձեռնություն է, որը փաստագրում և հետազոտում է Հարավային Կովկասում անհետացող և վնասված մշակութային ժառանգությունը բարձր լուծաչափով արքանյակային պատկերների միջոցով:

ԱՆՈՒՇ ՋԻԼԱՎՅԱՆ

Անուշ Ջիլալյանը ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության ամբիոնի ասպիրանտ է: Նրա ակադեմիական հետաքրքրության կենտրոնում քաղաքի մարդաբանությունն է: Աշխատում է «Արինասայթս» հետազոտական և խորհրդատվական ընկերությունում որպես հետազոտության օգնական:

ԿԻՐՈՎԱԿԱՆԻՑ՝ ՎԱՆԱԶՈՐ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՏԱՐԱԾՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

Նախկին խորհրդային արդյունաբերական քաղաքների ուսումնասիրությունը արդիական խնդիր է քաղաքի մարդաբանության հետազոտությունների շրջանակում: Կարևոր են հատկապես այն գործընթացները, որոնք ձևավոխում են քաղաքը և որոնց միջոցով ձևավորվում է հետխորհրդային քաղաքը:

Վանաձորը կամ խորհրդային Կիրովականը այս տեսակետից մեծ հետաքրքրություն է առաջացնում, քանի որ բացի խորհրդայինից հետխորհրդային անցման քաղաքական, տնտեսական գործընթացներից, քաղաքի վրա իր ազդեցությունն է թողել 1988 թվականի Մայիսակի երկրաշարժը: Կատարված

ուսումնասիրությունը փորձ է քաղաքի ֆիզիկական տարածության վրա ցույց տալ այդ գործոնների ազդեցությունը, այն փոխակերպումները, որոնք տեղի են ունեցել խորհրդայինից հետխորհրդային անցման փուլում:

Այսպիսով՝ հետազոտությունը ներկայացնում է այն շերտերը, որոնք կրում է ժամանակակից քաղաքի ֆիզիկական միջավայրը՝ սկսած դեռևս Ղարաքիլիսայից, որը ավան էր Ռուսական կայսրության շրջանում և որի հիմքի վրա զարգացավ խորհրդային արդյունաբերական Կիրովականը: Այս գործընթացը միավորում է պաշտոնական և հանրային պատկերացումները քաղաքի զարգացման, տարածության կազմակերպման և անցումային շրջանում առաջացած ճգնաժամի հաղթահարման վերաբերյալ:

ԳԱՐԻԿ ԱԹԱՆԵՍՅԱՆ

Գարիկ Աթանեսյանը մշակութային մարդաբան է: Աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները ներառում են քաղաքի մարդաբանությունը, հիշողության մարդաբանությունը և զբոսաշրջության մարդաբանությունը:

ՎԱՆԱԶՈՐԻ ԿԵՐՊԱՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԻ ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հայաստանի պատմության մեջ խորհրդային շրջափուլն ուղեկցվեց ընդհանուր և, առաջին հերթին քաղաքային բնակչության զգալի աճով, նոր քաղաքների առաջացմամբ: Սակայն նորաստեղծ քաղաքները հիմնականում տնտեսական հատուկ նեղ նպատակներ հետապնդող բնակավայրեր էին, որոնք ավելի շատ կապված էին նախկին ԽՍՀՄ այլ հանրապետությունների քաղաքների և արդյունաբերությունների հետ, քան՝ կենտրոնացած տեղական տնտեսության վրա: Սա լուրջ անհավասարակշռություն ստեղծեց Հայաստանի տարածական զարգացման մեջ՝ սահմանափակելով քաղաքների ադապտացիոն հնարավորությունները՝ համամիութենական միասնական տնտեսական համալիրի փլուզումից հետո: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նման ճակատագրի արժանացավ Հայաստանի արդյունաբերական հսկա Կիրովական քաղաքը, որի արդյունաբերական գրեթե բոլոր հաստատությունները դադարեցին իրենց աշխատանքները՝ քաղաքի առջև տնտեսական նոր հենասյուն գտնելու խնդիր առաջացնելով: Քաղաքի վիճակը բարդացրեցին նաև Մայիտակի ավերիչ երկրաշարժը, Արցախյան պատերազմը և ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր վիճակը:

Հետխորհրդային տարիներին Կիրովականը վերանվանվեց Վանաձոր, անվանափոխվեցին քաղաքի փողոցների, հրապարակների և այգիների մեծ մասը, փոփոխությունների են ենթարկվել քաղաքային ճարտարապետական և նշանային լանդշաֆտները: Համայնքային իշխանությունների կողմից պարբերաբար աշխատանքներ են տարվում քաղաքի կերպարի (վերա)կառուցման գործում: Սակայն տեսնում ենք, որ արդյունաբերական անցյալի ստվերներ հանդիսացող լքված գործարանների շենքերը, խորհրդային կարոտախոր, Կիրովականի խորհրդային քաղաքային ինքնության մնացորդները, քաղաքի տնտեսական զարգացման հեռանկարների բացակայությունը և սոցիալական ծանր իրավիճակը խորացնում են Վանաձորի քաղաքային ինքնության ճգնաժամը. համայնքային իշխանությունների կողմից քաղաքի զարգացման նոր ուղիների ներկայացման ու քաղաքի կերպարի ձևավորման պրակտիկաները վերջին տարիներին անընդհատ բախման մեջ են հայտնվում քաղաքի բնակիչների պատկերացումների և ակնկալիքների հետ՝ սույն թեման վերաժելով ուսումնասիրության համար չափազանց արդիական խնդրի:

Սույն գեկուցման մեջ քննարկված հետխորհրդային Վանաձորի ճարտարապետական և նշանային կերպարների ու քաղաքային ինքնության փոփոխությունները և քաղաքի զարգացման հեռանկարի

պաշտոնական ու հանրային պատկերացումների ու ակնկալիքների խնդիրները դիտարկել են «քաղաքային ինքնություն» և «քաղաքի ինքնություն» հասկացությունների շրջանակներում:

Թեման քննարկվել է միջգիտակարգային մոտեցումների և տեսությունների շրջանակներում. քննության են առնվել «քաղաքի կերպար» ու «քաղաքային ինքնություն» հասկացությունների ուսումնասիրության մարդաբանական, սոցիոլոգիական ու քաղաքագիտական մոտեցումներ, ինչպես նաև տարածքի ինքնության աշխարհագրական ու սոցիալական հոգեբանության մի շարք աշխատանքներ:

Հետազոտության նյութերը ձեռք են բերվել ազգագրական հարցումների միջոցով (խորացված ու փորձագիտական հարցազրույցներ), դիտման և վիզուալ արձանագրման մեթոդների կիրառմամբ: Բովանդակային և դիսկուրս վերլուծության են ենթարկվել ՉԼՄ-ներից, սոցիալական ցանցերից ու կայքերից գրանցված նյութերը և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչների տարբեր ելույթները, ինչպես նաև Վանաձորի զարգացման վերջին երեք ծրագրերը:

ՄԻԼԵՆԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Միլենա Բաղդասարյանը սոցիալական մարդաբան է և սոցիոլոգ, իր թեկնածուական ատենախոսությունը պաշտպանել է Մարտին Լյութերի անվան Հայլե-Վիլյեմսբերգի համալսարանում: Աշխատում է ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես ավագ գիտաշխատող, դասավանդում է ԵՊՀ-ում: Հետաքրքրությունների շրջանակը ներառում է աշխատանքային և հարկադիր միգրացիան, ազգայնականությունը և փոքրամասնությունների իրավունքները, քաղաքական էկոլոգիան, սոցիալական շարժումները, քաղաքացիությունը և գեները:

«ՁԵՐՄՈՒԿԸ ՀԱՆՔ ԶԻ ԴԱՌՆԱ». ԲԱՂԱՔԻ ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԳԱՅՔԱՐԸ ՀԱՆՈՒՆ ԲՆԱԳԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆ

1960-ական թվականներից Հայաստանի Ջերմուկ քաղաքը դարձավ բժշկական զբոսաշրջության ճանաչված կենտրոն: Քաղաքի տնտեսությունը մեծ ազդեցություն է ունեցել նրա բնակիչների ապրելակերպի վրա, որոնցից շատերն ընտրել են բժշկական զբոսաշրջության հետ կապված մասնագիտություններ: Ջերմուկի տնտեսությունը և նրա բնակիչների կյանքը բազմաթիվ առումներով միահյուսված են շրջապատող բնության հետ: Չնայած տնտեսական վերելքներին և վայրէջքներին, հանքային ջրի աղբյուրները, անադարտ բնությունը (ներառյալ պահպանվող տարածքները) և զարգացող ենթակառուցվածքը շարունակում են գրավել զբոսաշրջիկներին և ապահովել բնակիչներին եկամտի աղբյուրներով՝ առողջարաններում և շշպման արդյունաբերությունում աշխատանքի, բնակարանների վարձակալության, էքսկուրսիաների կազմակերպման, տեղական մթերքների վաճառքի, ձկնորսության և այլ միջոցներով: Ինչպես բնակիչները, այնպես էլ զբոսաշրջիկները արժևորում են քաղաքի անդորրը և այլ բարիքները:

Երբ 2010-2011 թվականներին Ջերմուկի և շրջակա որոշ գյուղերի բնակիչներին հայտնի դարձան քաղաքի մերձակայքում ոսկու հանքավայր շահագործելու ծրագրերը, նրանք առաջինը հայտնեցին իրենց մտահոգություններն ու առարկությունները: Շուտով նրանց միացան բնապահպանական նախաձեռնությունները և ակտիվիստները: Բնակիչներին խորապես մտահոգում է զբոսաշրջային տնտեսության վրա հանքի բացասական ազդեցությունը, սակայն դա բնակիչների միակ մտահոգությունը չէ: Նրանց հետ հարցազրույցները բացահայտում են, որ բնակիչներից շատերը գիտակցում են մարդու առողջության և շրջակա միջավայրի միջև կապը, խորապես գնահատում են բնական ռեսուրսները և կիսում են դրանք աղտոտումից պաշտպանելու մտահոգությունը: Այն փաստարկը, որ հանքը կարող է խարխիլել քաղաքի տնտեսությունը և հետագայում գրկել բնակիչներին երկարաժամկետ եկամտի

աղբյուրներից, հանքի դեմ պայքարի կարևոր մաս է հանդիսանում: Տվյալ զեկույցն ուսումնասիրում է, թե ինչպես են բնակիչները տեսնում իրենց քաղաքը, տնտեսությունն ու շրջապատող բնությունը, և ինչպես են այդ հայացքներն ազդել՝ քաղաքի մերձակայքում հանքարդյունաբերական նախագիծը կանխելու նրանց պայքարի վրա:

ՀԱՄԼԵՏ ՄԵԼՔՈՒՄՅԱՆ

Համլետ Մելքունյանը ՀԱԻ արդիականության ազգաբանության բաժնում գիտաշխատող է: Ակադեմիական հետազոտական հետաքրքրություններն են՝ քաղաքի մարդաբանություն, հասարակական շարժումների մարդաբանություն, եզդիագիտություն, տնտեսական մարդաբանություն (շուկաները անցումային փուլերում): Վերջին սկադեմիական հրատարակումները առնչվում են Հայաստանում և Վրաստանում հանրային տարածքների և ոչ ֆորմալ տնտեսության, խորհրդային սպրանքների և կարոտախտի, ուշ խորհրդային արդյունաբերական փոքր քաղաքների ինստիտուտների արդիականացման խնդիրներին: «Մշակույթը հանուն կայուն զարգացման» կազմակերպության համահիմնադիրն է:

ԽՈՐՀՐԳԱՅԻՆ ՈՒՏՈՊԻՍՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՏՈՄԱՅԻՆ ՔԱՂԱՔԻ ՀՏԵԽՈՐՀՐԳԱՅԻՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Մեծամորը կառուցվել է Խորհրդային Հայաստանում 1970-ականներին՝ ատոմակայանի գոյության և շահագործման պատճառով: Համարվելով «փակ» քաղաք՝ այն խորհրդային քաղաքաշինության վերջին փուլի արդյունքն էր՝ որպես ուտոպիստական տեսլականներն արտահայտող համակարգ: Մեծամորը քաղաքաշինության եզակի օրինակ է՝ հաշվի առնելով, որ բնակավայրն ամբողջությամբ մտահղացել, նախագծել և կառուցել է միայն մեկ ճարտարապետ: Այս «իդեալական» սոցիալական և քաղաքային տարածքի ընկալումը սկսվել է խարխիվել և փոփոխվել այն բանից հետո, երբ առաջինի բնակիչները զգացել են բնակարանների և ապրանքների մատակարարման հետ կապված «իրական» խնդիրներ: Մեծամորը փորձ է իրականացնելու պատկերացված Խորհրդային Միության գաղափարներն ու տեսլականները քաղաքային լանդշաֆտի միջոցով, որտեղ պետք է հայտնվի «ճիշտ» խորհրդային սոցիալական միջավայր: Մեծամոր քաղաքի բնակիչների առօրյա կյանքի ուսումնասիրության միջոցով կարելի է տեսնել կոմունիստական կառավարությունների գաղափարախոսության և դրա ինստիտուցիոնալ իրագործման միջև առկա բացերը:

Խորհրդային արդիականացման քաղաքականությունը ձգտում էր ընդգծել քաղաքի գիտական և տեխնոլոգիական առաջընթացը, ուտոպիստական ապագան, բայց հետխորհրդային շրջանում արդիականացումը բռնեց ազգայնականության և կրոնի ընդգծման և վերահայտնագործման ճանապարհը:

10-ԲԴ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԸ ԱՌՕՐՅԱՅՈՒՄ

ՔՆՆԱՐԿՈՂ՝ ԱՆՆԱ ՍՈԿՈՒՈՎԱ

Աննա Սոկոլովան 2013թ. մինչև օրս Ռուսաստանի գիտությունների սկադեմիայի Էթնոլոգիայի և մարդաբանության ինստիտուտի գիտաշխատող է: 2015-2016 թթ. աշխատել է Ռուսաստանի Դաշնության Նախագահին առընթեր Ժողովրդական տնտեսության և պետական կառավարման սկադեմիայի Ժամանակակից քաղաքական ֆոլկլորի մոնիտորինգի խմբում որպես գիտաշխատող:

Աննա Սոկոլովան կրթություն է ստացել Շվեյցարիայի Ցյուրիխի համալսարանում (2017-2021 թթ.): Նրա երկրորդ թեկնածուական ատենախոսության պաշտպանությունը նախատեսված է 2022 թվականի սեպտեմբերին (SNF-ի ֆինանսավորմամբ իրականացվող «Ուշ խորհրդային գյուղ. մարդիկ, հաստատությունները և իրերը ուրբանիզմի սոցիալիստական պաշտամունքի և քաղաքային սպրեյակերպի

գյուղականացման միջև» նախագիծի շրջանակներում): Թեմայի վերաբերյալ հետազոտական աշխատանքն է. «Պետական հիմնարկները և ուշ խորհրդային Կարելիայում փայտագործների բանվորական բնակավայրերի կյանքը»: Համադեկլարներն են՝ պրոֆ. Եկատերինա Էմելյանցևա-Կոլլեր՝ Յուրիխի համալսարանի պատմական սեմինար և պրոֆ. Յուլիա Լայուս՝ Տնտեսագիտության բարձրագույն դպրոց - Ազգային հետազոտական համալսարան, Սանկտ Պետերբուրգ:

ԱՂԱՍԻ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ

Աղասի Թաղևոսյանը մշակութային մարդաբան է, ազգագրագետ: Աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես առաջատար գիտաշխատող: Ունի հրատարակած 18 մենագրություն և շուրջ 100 գիտական հոդված ինչպես հայկական ժողովրդական մշակութային ժառանգության, այնպես էլ ժամանակակից հասարակական-մշակութային գործընթացների վերաբերյալ: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է անցումային գործընթացների և քաղաքային առօրեականության մարդաբանություն, աղքատության և միգրացիոն հետազոտություններ, մշակութային տուրիզմ ու ավանդական և ժամանակակից արհեստներ:

ՀԱՅԱՑՔ ՓՈՔՐ ՔԱՂԱՔԻ ՀԵՏԱՐԳԻԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԻՑ ԴԵՊԻ ԻՐ ՀԵՏԵՈՐՀՐԿԱՅԻՆ ԱՐԳԻՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼԸ. ՍԻՍԻԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Ներկայացվող գեկույցում քննարկվում է 1970-1980-ական թվականներին Խորհրդային Հայաստանի փոքր քաղաքներից մեկում արդյունաբերացմանը զուգընթաց իրականացվող արդիականացման գործընթացները: Արդիականացումը այս քաղաքում նախաձեռնվել ու իրականացվել է խորհրդային պաշտոնական քաղաքականության ծրագրավորված գործողությունների համաձայն. կառուցվել է կինոթատրոնի շենք, մշակույթի պալատ, ռեստորան և խորհրդային փոքր քաղաքի համար նախատեսված այլ ստանդարտ հաստատություններ, որոնց նպատակն է եղել կազմակերպել նոր ձևավորվող քաղաքային բնակչության ազատ ժամանակն ու ժամանցը: Մշակութային ու լուսավորչական պաշտոնական միջոցառումների ծրագրերին զուգահեռ քաղաքային հասարակությունը ձևավորում էր պրակտիկաներ, որոնք դուրս էին խորհրդային ֆորմալ միջոցառումների շրջագծից և ներկայացնում էին այն ստվերային տարածքները, որոնք առաջանում էին ֆորմալ պրակտիկաներին զուգահեռ և դրանց շնորհիվ: Այդ ստվերային տարածքները փաստացիորեն ամբողջացնում էին պաշտոնական պրակտիկաներն ու դիսկուրսները և պայմանավորում փոքր քաղաքի բնակչության առօրյա կյանքի արդիականացման առանձնահատկությունը: Այն մի կողմից իր ձևով ու բնույթով խորհրդային էր, մյուս կողմից դրա ձևավորած ստվերային տարածքներում՝ ապաստվետական: Ապաստվետականը շատ յուրօրինակ երևույթ էր, որն իր բովանդակությամբ ու ձևով հակաստվետական չէր և նպատակ չունեցող հատուկ հակադրվելու խորհրդային պետական քաղաքականությանն ու դրա գաղափարախոսական դրույթներից բխեցվող դիսկուրսներին ու պրակտիկաներին, սակայն ինքին ձևավորում էր իրավիճակ, ինչը դուրս էր պաշտոնական խորհրդայինից ու դրանով հանդերձ՝ դժվար վերահսկելի: Սա չափազանց հետաքրքիր գործոն էր, որը մի կողմից մոտեցնում էր խորհրդահայ փոքր քաղաքի բնակչության արդիականացումը աշխարհում ընթացող արդիականացման գլոբալ գործընթացներին, բայց միևնույն ժամանակ այն պահում խորհրդային պաշտոնականի սահմաններում, առաջացնում խորը տարբերություններ՝ դառնալով խորհրդահայկական արդիականության առանձնահատկության ձևավորման կարևոր գործոններից մեկը:

Հետխորհրդային շրջանում Սիսիանի հանրային տարածքները մեծ արագությամբ փոխեցին իրենց հանրային նշանակությունը և դրա հետ միասին վերացան այն բոլոր հանրային պրակտիկաները, որոնք

բնորոշ էին քաղաքային արդիությանը: Հետխորհրդային քաղաքի առանձնահատկությունն այն է նաև, որ այն մերժել է ինդուստրիալը, բայց դեռ չի ձևավորել իր հետիմդուստիալ ինքնությունը:

ՏԱԹԵՎԻԿ ՍԱՐՈՅԱՆ

Տարեկիկ Մարոյանը մասնագիտությամբ թանգարանագետ է: Ծուրջ 5 տարի (2007-2012) աշխատել է Երևան քաղաքի պատմության թանգարանում որպես զբոսավար: Հայաստանի Ազգային պատկերասրահում (2013-2014) աշխատել է որպես գիտաշխատող: 2014թ. ընդունվել է Ռուսական արվեստի թանգարան՝ որպես ցուցահանդեսների կազմակերպման և հանրահռչակման բաժնի վարիչ: 2018թ. հանդիսացել է ԱՄՆ ՄՁԳ, Սմիթսոնյան ինստիտուտի «Իմ Հայաստան» ծրագրի թանգարանային կոմպոնենտի համակարգող: 2019թ. Ուրբանլաք կազմակերպությունում համակարգել է ՀՀ Նախագահի ամենամյա մրցանակի աշխատանքները: 2019թ. մայիսից առ այսօր աշխատում է «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես հանրային կապերի բաժնի վարիչ: «Սուրճը հայ իրականության մեջ» գիտական թեմայի ուսումնասիրության նպատակով 2021թ. հանդիսանում է Մատենադարանի հայցորդ: Հովհաննես Թումանյանի թանգարանում 2021թ. մեկնարկած «Սուրճի մշակույթի հայկական հետազոտություն» նախագծի հեղինակներից է և համադրողը: 2008 թ.-ից անդամակցում է Թանգարանների միջազգային կոմիտեին՝ ԻԿՕՄ-ին: 2008թ. հանդիսանում է ԻԿՕՄ Հայաստանի ազգային կոմիտեի խորհրդի անդամ:

ՍՈՒՐՃԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԻՋՎԱՅՐՈՒՄ. ՄԵՃ ԵՎ ՓՈՔՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԵՄՏԱՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐՆ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՆՅՈՒԹԵՐԻ

Այսօր մեր առօրյան դժվար է պատկերացնել առանց սուրճի. այն դարձել է մարդկության ամենապահանջված ըմպելիքը: Դրա շնորհիվ մարդիկ հնարավորություն են ունենում տեսնել միմյանց, գրուցել և ժամանակ անցկացնել:

Համաձայն հայտնի կարծիքների՝ Արևելյան Հայաստանում սուրճի գանգվածային կիրառումը ծավալվեց 1940-50-ական թթ.՝ հայրենադարձների միջոցով: Մակայն պատմական վկայություններն այլ տեղեկություն են մեզ հաղորդում այն մասին, որ այս ըմպելիքի հետ արևելահայերը ծանոթ են եղել դեռևս 19-րդ դարից: Սուրճը, համարվելով քաղաքային մշակույթի բաղադրիչ, Հայաստանում ևս տարածում գտավ գլխավոր քաղաքներում՝ Ալեքսանդրապոլում և Երևանում՝ հիմնականում սրճարանների տեսքով: Արևմտյան Հայաստանից ներմուծված մշակույթը իր ուրույն դրսևորումը գտավ մտավորական խավի մոտ:

Սրճարանի մշակույթը ի հայտ է եկել արևելքում: Այն հանդիսացել է բացառապես տղամարդկանց հավաքատեղի, որտեղ ունկնդրել են երաժշտություն, խաղացել շախմատ, մասնակցել քաղաքական քննարկումների, ձևավորել ընդդիմադիր գաղափարներ: Սրճարանները եղել են նաև գրողների, ստեղծագործողների հանդիպման վայր, ինչի շնորհիվ այն ստացել է «իմաստունների դպրոց» կամ «համալսարան» անվանումը, որտեղ երիտասարդ ստեղծագործողներն ավագների ներկայությամբ նաև քննություն են անցել:

Ալեքսանդրապոլի և Երևանի սրճարանները 19-20-րդ դարերում ծառայել են նաև աշուղների ստեղծագործությունները վայելելու կենտրոններ, ուր ամեն մի սրճարան ունեցել է իր աշուղը կամ աշուղական խմբերը, ինչպես նաև գրողների ու դերասանների հավաքատեղի, ազգային կրթության ու դաստիարակության օջախներ, քաղաքական հետապնդումներից խուսափելու ծայտյալ վայրեր, այսինքն՝ հանդիսացել են բազմաֆունկցիոնալ կառույցներ: Դրանք աչքի են ընկել իրենց ճարտարապետական լուծումներով, գովազդային վահանակներով՝ տարբերվելով քաղաքի մյուս շինություններից:

Սրճարանների ի հայտ գալը նոր մշակույթ ու մոտեցումներ ներմուծեց քաղաքային միջավայր: Հնարավորություն ընձեռեց ազատության գաղափարները կիսել հանրային տարածքներում՝ դառնալով

նաև անձի ինքնադրսևորման և կայացման հարթակ: Իսկ 20-րդ դարի 60-70-ական թթ. սրճարանների մասսայական դառնալը նաև բեկումնային եղավ հիմնականում Երևանում՝ կանանց հնարավորություն տալով մուտք գործել դարեր շարունակ արգելվող տարածք: Սրճարանը դարձավ կարծրատիպերից ազատվելու և նոր մոտեցումներ դրսևորելու ինստիտուտ:

Մեր օրերում, իհարկե, պատկերն այլ է: Այսօրվա սրճարանային միջավայրը բավականին տարբերվում է դեռևս 10 տարի առաջ առկա մշակույթից և բազմազանության մեջ ունի այս ժամանակների թելադրանքի իր առանձնահատուկ դրսևորումը: Սրճարանն այն սոցիալ-մշակույթային հարթակն է, որն ամենաարագն է փոփոխվում՝ իր մեջ կուտակելով տվյալ ժամանակաշրջանի բարքերի և միտումների դիմագիծը:

ՌՈՄԱՆ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Ռոման Հովսեփյանը մասնագիտությամբ էթնոքուլտուրայի և հնաքուլտուրայի է: Աշխատում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում որպես հնակենսաբանության և էթնոկենսաբանության գիտահետազոտական խմբի ղեկավար և ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են Հարավային Կովկասի, Առաջավոր Ասիայի և Հարավ-արևելյան Եվրոպայի նախապատմական տնտեսություններն և միջավայրերը, հայերի, եզդիների, քրդերի և մոլդականների էթնոքուլտուրայությունը, երկրագործությանը և եղանակին առնչվող ծեսերը Հայաստանում:

ՎԱՅՐԻ ԲՈՒՅՍԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍՅՈՒՆԻՔԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ

Սյունիքի Կապան, Գորիս և Մեղրի քաղաքային բնակատեղիներում 2020-2021 թթ. տարբեր սեզոնների ընթացքում կատարած էթնոքուլտուրայական հետազոտությունների արդյունքում (ՀՀ ԳԿ 20ՏՏՏՀ-053) դիտարկել ենք որոշ առանձնահատկություններ և ընդհանրություններ, որոնց նախնական վերլուծությունը և մեկնաբանությունը հակիրճ կներկայացվեն ելույթում: Դաշտային հետազոտությունները անց են կացվել առանձին քաղաքային մշտանիքներում կատարված խորացված հարցազրույցների և առևտրի կետերում (քաղաքային մշտական շուկաներ, խանութներ, փողոցային շրջիկ առևտրականներ և այլն) կատարած դիտարկումների և հարցազրույցների միջոցով: Քաղաքային միջավայրերում վայրի բույսերի օգտագործման մշակույթի տարբեր ասպեկտների համար ներկայացուցչական են քաղաքում վաճառվող վայրի բույսերը և քաղաքային բնակչությանը սպասարկող բույսերի շուկաները: Վայրի բույսերի կազմը և օգտագործման մշակույթը իր դրսևորումներով և առանձին պրակտիկաներով բազմազան են գյուղական միջավայրում: Տարբեր գյուղական միջավայրերից տեղափոխվելով քաղաքային միջավայր, վայրի բույսերի օգտագործման պրակտիկաները օպտիմալիզացվում (կրճատվում) են որակապես և քանակապես:

ԷՄՄԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Էմմա Պետրոսյանը աշխատում է ՀՀ ՀԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում, պատմական գիտությունների դոկտոր է և ավագ գիտաշխատող:

ԼԱՐԱԽԱՂԱԳՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՐԵԿ ԵՎ ԱՅՍՕՐ

Լարախաղացությունը և փետեոտերով քայլելը հայ ժողովրդական հնագույն արվեստներից է: Առաջին անգամ լարախաղացի պատկերը փետեոտերի վրա հանդիպում է IX – VI դ. մ.թ.ա. ուրարտական բրոնզե գոտու վրա: Հետագայում Դավիթ Անհաղթը (V – VI դ.) լարախաղացությունը և ձողախաղացությունը նշում է որպես արհեստ: Պոլսում XIXդ. մեծ համբավ ուներ լարախաղացների «Արամյան ընկերությունը» Հովհաննես Գասպարյանի ղեկավարությամբ:

Լարախաղացները շրջիկ դերասաններ են և ելույթ են ունենում բացօդյա: Այդ արվեստի հովանավորը համարվում է Սուրբ Կարապետը և այդ է պատճառը, որ եկեղեցիների բակում, քաղաքային ու գյուղական

հրապարակներում թույլատրվում էր ելույթ ունենալ: Հին Երևանում լարախաղերը հադես էին գալիս Ղանթար շուկայի մոտ գտնվող Ցախի հրապարակում: Յուրաքանչյուր խումբ ուներ մարմնամարզային և պարային մոտ 16 համար: Խմբերի միջև մրցակցությունը մշտական էր, բայց դժվար համարների կատարողները հարգանքի էին արժանացվում ոչ միայն լարախաղացների, այլև երևանցիների միջավայրում: 20-րդ դարի սկզբին Երևանում շրջում էին լարախաղացների մոտ 10 խումբ: Հիմնականում նրանք Թ-ափաղիքի (այժմ՝ Երանջատափ) գյուղի ծնունդ էին: Բայց շուտով նրանց մեծ մասը հաստատվեց Երևանում: Սովետական կարգերի ժամանակ Երևանի գործկոմը ընդգրկեց լարախաղացներին Մշակույթի տների աշխատակազմում: Ելույթներից հավաքած գումարը ապահովում էր նրանց արժանապատիվ գոյությունը: Բայց 20-րդ դարի 90-ամներից սկսած բարդ սոցիալական փոփոխությունները հանգեցրին նրան, որ լարախաղացները նույնիսկ նվազագույն գումար չէին հավաքում ելույթներից: Սկսվեց համարների կրճատումը, մոռացվեց լարախաղացի ու ծաղրածուի կատակ երկխոսությունը և փետտետերով քայլելը: Դժվար դիրք համարը տրվեց մոռացության: Տեղի ունեցան նորամուծություններ՝ գուռնայի ու դիոլի նվագը փոխարինվեց ձայնագրությունով, կանեփի պարանը՝ տրամվայի մետաղալարով, լարի ծայրին միացրեցին տրակտորից հանած զսպանակը, ոտաբոքիկ քայլելու փոխարեն լարի վրա հագան սպորտային մասիկներ: Լարախաղացությունը դարձավ ոչ հեղինակավոր արվեստ: Այժմ Երևանում ելույթ են ունենում մոտ երկու լարախաղացների խումբ, որոնք պահպանել են որոշ ավանդական ձևերը:

11-րդ ՆԻՍՏ. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔՈՒՄ

ՔՆՆԱՐԿՈՂ ԲԻԿ ԱԴԻԻԱՆՍ

Դոկտոր Բիկ Ադրիանսը մեղիա մարդաբանության դասախոս է Լոնդոնի համալսարանական քոլեջում: Նրա դոկտորական ստեղծագործությունն ուսումնասիրում էր իմիջի ստեղծման, մեղիա տեխնոլոգիաների և սիյուռքի ճանաչման համար պայքարի փոխհարաբերությունները այն անդրազգային ցանցերում, որոնք կապում են հետխորհրդային Հայաստանը Լոս Անջելեսի հայկական սիյուռքի հետ: Նրա մշտական հետաքրքրությունն մեջ են գտնվում Հայաստանում և Հունգարիայում հանրաճանաչ երաժշտության և թվային մշակույթի ազգագրության հետազոտությունները: Նրա վերջին հետազոտական նախագիծը մոդուլային սինթեզատորների մշակույթի ազգագրական ուսումնասիրությունն է:

ՀՌԻՓՍԻՄԵ ՊԻԿԻՉՅԱՆ

Հռիփսիմե Պիկիչյանը ազգագրագետ է, ԵՊՀ-ի Մշակութաբանության ամբիոնի դոցենտ, պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ժողովրդական երաժշտագիտության բաժնի սխազ գիտաշխատող: 2006թ.-ին նա ստացել է գիտությունների թեկնածուի գիտական աստիճան մշակութային/սոցիալական մարդաբանության ոլորտում:

ԱՎԱՆԴԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԵՆՍՐՆԹԱՅՐ. ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ

Հոդվածի շրջանակներում դիտարկվում են երաժշտության, պարի, ծիսական արարողության միջոցով հայ ավանդական կենսակերպի բաղադրիչների՝ քաղաքային միջավայրում տարածվելու և վերակերպավորվելու գործընթացը՝ Երևանի Պոլիտեխնիկական ինստիտուտի նախաձեռնած ազգագրական փառատոներից մինչև Կասկադում պարբերաբար կազմակերպվող հայկական պարի ուսուցման երեկոներ ու «Գուլթան» փառատոն: Այս համատեքստում քննարկվում են քաղաքային,

ընտանեկան ու հանրային տոնաձիսական կյանքում տեղ գտած փոխակերպումներին, ավանդական գեղջկական երաժշտության ժանրային ու կատարման արդի մեկնաբանումներին ու ինքնության ընկալումներին առնչվող հարցերը: Ինքնության վավերացման ու ներկայացման համատեքստում դիտարկվում են ավանդական ծեսի, երաժշտության ու պարի անցումը բնական կենսաբանական դեպի ինքնագործ համայնքներ, դրանց փոխակերպված ու բեմականացված տարբերակների ներմուծումը քաղաքային կենցաղ, ապա նաև շրջապատված վերադարձը դեպի գյուղական միջավայր:

ԼՈՒՄԻՆԵ ՀԱՅՐԻՅԱՆ

Լուսինե Հայրիյանը բանագետ է, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժնի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են բանավոր և գրքային ավանդույթների բազմազան կապերը, գրականություն-բանահյուսություն փոխազդեցություններն ու հայ ժողովրդական հեքիաթների ծիսահավատալիքային տարրերը:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՌՈՄԱՆՍԻ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԸ

Հայ ավանդական երաժշտությունն ունի երեք հիմնական ճյուղ՝ գեղջկական, քաղաքային ֆոլկլոր և գուսանական-աշուղական արվեստ: Հայ ժողովրդական երգերի հրապարակման պատմությունը հիշարժան է՝ հատկապես գեղջկական բանարվեստի և երգերի արժևորմամբ: «Քաղաքային ֆոլկլոր» կամ «քաղաքային երգարվեստ» որակվող երգաստեղծության բնագավառն առավել հայտնի է, մասնավորապես, 19-21-րդ դարերը ներառող ժամանակահատվածի նյութերով:

Քաղաքային երաժշտական բանահյուսությունն իրեն նախորդած գեղջկական բանավոր ավանդությունից տարբերվում է մի շարք յուրահատկություններով: Քաղաքային քնարական բանահյուսությունն, ի տարբերություն գեղջկականի, ավելի ուշ ժամանակաշրջանի երևույթ է՝ ստեղծվելով գրական կամ ժողովրդախոսակցական լեզվով և կենցաղավարելով առավելապես քաղաքային շրջանակներում: Թեպետ մեծանուն Կոմիտաս վարդապետն իբրև բանահյուսական՝ բուն, անխառն ճյուղ, դիտարկել է գեղջկական երաժշտությունն ու երգարվեստը, երգաստեղծության շնորհը բնության գրկում՝ բնությունից սովորող գյուղացու բնատուր պարզը համարելով և թերահավատորեն անդրադառնալով քաղաքային երաժշտական բանահյուսությանը (ինչը սուկ հայկական միջավայրում ձևավորված կարծիք չէր. այս երաժշտական բնագավառի հանդեպ Ֆ. Դոստոևսկին, օրինակ, գեղագիտական հակակրանք ուներ՝ քաղաքային ռոմանսը բանաձևելով «պանդոկային» երգարվեստ կամ «կեղծ բանահյուսություն» քամահրական արտահայտություններով), այնուամենայնիվ, ժողովրդական երաժշտության այդ բնագավառն իր յուրակերպ դրսևորումներով մնում է երաժշտագետների, ազգագրագետ-բանագետների հետազոտական դիտակետում: Ժողովրդական և հեղինակային բանաստեղծական տեքստերով (ժողովրդախոսակցական կամ գրական լեզվով) ստեղծված հայ քաղաքային երաժշտական բանահյուսությունն արտահայտել է քաղաքային միջավայրի բնորոշ գծերն ու կենցաղավարել քաղաքի շրջանակներում: Հայ քաղաքային երգարվեստի որոշ նմուշներում նկատելի են նաև ռոմանսի տիպական տարրեր, ինչը կարելի է բացատրել եվրոպական և ռուսական երգարվեստային որոշ առանձնահատկությունների փոխազդեցությամբ: Նկատենք, որ նույնիսկ Ռոմանոս Մելիքյանը, ով հայկական դասական ռոմանսի՝ ազգային կամերային-վոկալ երաժշտության ինքնուրույն ժանրի ձևավորողն էր հայ իրականության մեջ, հենվել է ժողովրդական երգի, մասնավորապես, հայկական ռոմանսի տարատեսակներից մեկի՝ քաղաքային երաժշտական ֆոլկլորի, կենցաղային և ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտության մասնահատկությունների վրա (1908-1914 թթ. «Աշնան տողեր» երգաշարի հիմքում քաղաքային երաժշտական բանահյուսությունն է):

Մեր այս գեկուցման շրջանակներում փորձելու ենք պարզել գեղջկական և քաղաքի երգային բանահյուսության տեքստային կառույցների ընդհանրություններն ու առանձնահատկությունները, դրանց իմաստաբովանդակային և գաղափարախոսական հենքը, խոսքաշեն արտահայտչամիջոցները, բանաձևային մտածողության դրսևորումները: Քննելու ենք քաղաքային ռոմանսից սերող հեղինակային երգի, ռաբիսի, շանսոնի, այլ ժողովուրդների քաղաքային կենցաղային երգերի ոճական ազդեցությունները, ավանդական և արդի քաղաքային երաժշտական մշակույթի փոխակերպումների ընթացքն ու փոխհարաբերակցության մի շարք հիմնախնդիրներ:

ՌԻՄԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Ռիմա Տիգրանյանը երաժշտագետ է, ախարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի Երաժշտագիտության բաժինը, ունի մագիստրոսի որակավորում: Այնուհետև, ախարտել է ԵՊՀ-ի Պատմության ֆակուլտետի Մշակութաբանության մագիստրատուրան: Այժմ պատրաստվում է դառնալ ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ: Գիտական հետաքրքրությունների ոլորտն է համաշխարհային, խորհրդային, հայաստանյան ջազը՝ մշակութային երաժշտագիտության գիտակարգում:

ԵՐԵՎԱՆԻ ՋԱՉԱՑԻՆ ԴԻՄԱՆԿԱՐԸ. ԸՆԴՀԱՏԱԿՅԱԿ, ԱՌԱՋՆԱԳԾԱՅԻՆ ԵՎ ԷԼԻՏԱՐ

Չեկույցում կներկայացնեմ ջազային Երևանն իր ընդհատակյա, առաջնագծային տարբեր շերտերով, ինչը կներկայացնի Երևանի ջազային քարտեզագրումը, կդիտարկվի քաղաքաշինության և դեվիանտ ենթամշակույթների ուսումնասիրության տեսանկյունից: Կգծագրվի «եռահարկ» ջազային Երևանը: Կքննարկվեն ընդհատակյա և առաջնագծային շերտերի դրդապատճառները, խորհրդային և հետխորհրդային քաղաքականության և ժամանցային մշակույթի դրդապատճառների համատեքստում:

ՄԻՔԱՅԵԼ ՉՈԼՅԱՆ

Միքայել Չոլյանը 2005թ. պաշտպանել է թեկնածուական ստեննախոսություն ԵՊՀ պատմության ֆակուլտետում: Այնուհետև աշխատել է որպես պատմաբան և քաղաքական վերլուծաբան՝ կենտրոնանալով ազգայնականության, կոնֆլիկտի, հիշողության քաղաքականության, ինչպես նաև Ժողովրդավարացման գործընթացների ուսումնասիրության վրա: Հայկական հեղափոխությունից հետո նա կարճ ժամանակով շեղվում է ակադեմիական ուղուց, դառնալով քաղաքական գործիչ և այժմ փորձում է վերադառնալ ակադեմիական աշխարհ և գտնել հետազոտության նոր հորիզոններ:

ԴԻՉԵՅԸ ՈՐՊԵՍ ԾԱՄԱՆ. ՆԱԽՆԱԴԱՐՅԱՆ ՏՈՆԻ/ԾԵՍԻ ՏԱՐՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՌԵՅՎ-ՄՇԱԿՈՒՅԹԻ ՄԵՉ

Հոդվածում նկարագրվում է հայկական ռեյվի մշակույթի ֆենոմենը, որը սկզբնավորվել է դեռ 1990-ականներից, բայց հատկապես արագ է սկսել զարգանալ Հայաստանում 2018 թվականի իրադարձություններից հետո: Հայաստանում ռեյվի մշակույթի զարգացման ակնարկից հետո ես անցնում եմ իմ փորձառությունների և դիտարկումների նկարագրությանը՝ Հայաստանում էլեկտրոնային պարային երաժշտության միջոցառումներից: Ըստ իս՝ այս միջոցառումների ընթացքում կարելի է նկատել շատ ընդհանրություններ արխայիկ արարողությունների/տոնակատարությունների հետ: Ակումբի անվտանգության աշխատակիցներից դիջեյներ և անգամ անհատ «ռեյվերներ»՝ յուրաքանչյուրն ունի իր հատուկ դերն ու գործառույթը կյանքի այս տոնակատարության մեջ: Երաժշտությունը, լուսավորությունը, ընդհանուր մթնոլորտն օգնում են ռեյվի մասնակիցներին մտնել այնպիսի մի հոգեվիճակի մեջ, որը նման է տարբեր մշակույթներում արխայիկ ծեսերի նկարագրությանը: Ես նաև խոսում եմ այս հետազոտությունը հետագայում զարգացնելու հնարավոր ուղիների մասին:

12-ԻԳ ՆԻՍՏ. ՔԱՂԱՔԱՅԻՆ (ՊՈՍՏ)ՖՈԼԿԼՈՐ

ՔՆՆԱՐԿՈՂ ՍՎԵՏԼԱՆԱ ՏԱՄԲՈՎՅԵՎԱ

Սվետլանա Տամբովցևան մարդաբանության մագիստրոսի աստիճան է ստացել Սանկտ Պետերբուրգի Եվրոպական համալսարանից, Բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան՝ Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի ռուս գրականության ինստիտուտից (Ph.D. candidate in Folklore Studies), ներկայումս աշխատում է աստենասիտության վրա՝ նվիրված Ռուսաստանում կրոնական այլախոհության տեքստային մշակույթին և Տնտեսագիտության բարձրագույն դպրոցում դասավանդում է սոցիալական մարդաբանություն: Բացի ակադեմիական հետազոտություններից, նաև որպես հետազոտող մասնակցել է մի շարք կիրառական աշխատանքների և նախագծերի դատական լեզվաբանության, քաղաքագիտության և հաճախորդների սպասարկման ոլորտներում:

ՄԱՐԻՆԵ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Մարինե Խաչատրյանը արվեստի քննադատ է և հետազոտող: Գրում է հոդվածներ «Քննադատական հանդես» մշակույթային կայքում և «Ինդայթ» հանրային հետազոտությունների կենտրոնում: Սովորել է ԵՊՀ-ի Պատմության ֆակուլտետի Արվեստաբանության և Հայաստանի ամերիկյան համալսարանի Քաղաքագիտության և միջազգային հարաբերությունների բաժիններում: Երա հետաքրքրությունների շրջանակներում են մշակույթի և ժամանակակից արվեստի քննադատության որոշ հարցեր, փոփոխության տեսություններ, որոնք երբեմն իր հոդվածներում զուգորդում է սոցիալ-քաղաքական խնդիրների քննարկումների հետ:

ՔԱՂԱՔԸ ԵՎ ԼԵԶՈՒՆ

Քաղաքը, ավելի կոնկրետ մայրաքաղաքը և լեզուն շաղկապված են հիերարխիկ կապերով: Մայրաքաղաքը առհասարակ կապվում է գրական լեզվի, այլ քաղաքներն ու գյուղերը բարբառների հետ: Գյուղից եկած մարդիկ հաճախ են բնորոշվում «գյուղացի» (շատերն անգամ ասում են «գեղացի»), «գավառական», «ռայոնցի», «մարզից եկած»՝ ոմանց համար չեզոք, ոմանց համար վիրավորական բառերով, իսկ բարբառներն էլ այդ պիտակների ապացույցներն են:

Ուրեմն՝ առաջին հերթին հակադրելու են քաղաքը, ավելի ճիշտ՝ մայրաքաղաքը, իսկ ավելի կոնկրետ՝ մայրաքաղաքի լեզուն՝ այսպես կոչված գրականը, բարբառին՝ իբրև հիերարխիկ կապով շաղկապված երևույթներ: Երկրորդ հերթին քննարկվելու է գրական կամ երևանյան հայերենի հարաբերությունը արևմտահայերենի հետ: Փորձ կարվի պնդելու, որ մայրաքաղաքը անհանդուրժող է միջլեզվական տարբերությունների հանդեպ, դրա համար փողոցում լեզուների խայտաբղետություն չկա, չնայած որ կա գյուղերից ու քաղաքներից արտահոսք դեպի մայրաքաղաք: Երևանն ասես կլանում է լեզուները և շտամպով վերածում երևանյան հայերենի: Սակայն ելնելով արևմտահայերենի՝ «քաղաքակիրթ աշխարհից եկած լինելու» հանգամանքից, մայրաքաղաքը քիչ թե շատ հանդուրժող է արևմտահայերենի հանդեպ: Հավանաբար այդ, և արևմտահայերենի՝ իրենք իրենց գավառական կատեգորիայի տակ չնոցնելու մտայնության պատճառով է, որ Երևանի փողոցներում հաճախ լսվում է արևմտահայերենը՝ չնայած դա և ս արժանանում է եթե ոչ քամահրանքի, ապա առնվազն հատուկ ուշադրության, ասես շեշտելով տեղացի չլինելու հանգամանքը: Իսկ ահա արևելահայերենում առկա բարբառները, եթե անգամ լսվում են մայրաքաղաքում, ապա շատ քիչ կամ նույնիսկ շշուկով: Չէ՞ որ դրանք մատնում են «գեղացի կամ գավառական» լինելու «պախարակելի» կնիքի մասին: Երևանում բարձր ամբիոններից հնչում են բարբառների բազմության հետևանքով լեզվի հարստության մասին խոսքեր ու պարծենում են լեզվի

բազմազանությամբ, սակայն իրականում Երևանի քաղաքացիները բնիկի արժանապատվությամբ (ընդ որում՝ ամեն «նորեկ» «դահիճ բնիկի» դեր է կատարում առավել նորեկների հանդեպ) ամեն նոր եկողի հանդեպ հավելյալ ուշադրությամբ «ճնշում են գործադրում»՝ հրաժարվելու սեփական բարբառից: Երևան մտնելուն պես մարզի բնակիչները լուռ և սեփական համաձայնությամբ վայր են դնում բարբառն ու ակցենտը սեփական բերանային ապարատում հոլովելու ցանկությունը: Եվ այսպես, մայրաքաղաքի փողոցներից ջնջվում են տարբերության նշանները՝ քաշվելով տների պատերից ներս: Երրորդ հերթին կքննարկվի հայերենի ու մայրաքաղաքում լսվող օտար լեզուների բարդ հարաբերությունը: Սույն զեկույցում քննության կենթարկվեն նշված հարցերը՝ գյուղի ու քաղաքի, մարզի ու մայրաքաղաքի, բարբառի ու գրական լեզվի հակադրության լույսի ներքո, շեշտելով դրանց միջև հիերարխիկ կապերը:

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Նվարդ Վարդանյանը բանագետ է, բ.գ.թ., ԵՊՀ Հայ գրականության պատմության և տեսության ամբիոնի դոցենտ, ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի Բանահյուսության տեսության և պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Մասնագիտական հետաքրքրություններն են հայ ժողովրդական բանահյուսությունը՝ ժողովրդական հեքիաթները, երգերը, էպոսը: Հեղինակ է ավելի քան 35 գիտական հոդվածների և 2 մենագրության:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՂՋԻԿՆԵՐԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԱՅԻՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԲԱՂԱՔԱՅԻՆ ԵՆԹԱՄՇԱԿՈՒՅԹ

Նախորդ դարի վերջին տասնամյակներին քաղաքային միջավայրում, դպրոցական բարձր դասարանի աղջիկների մեջ լայնորեն տարածված էր հուշատետրեր պահելու մշակույթը: Այսպիսի հուշատետրերը լեցուն էին դպրոցականների տարիքին բնորոշ բանահյուսական տարբեր դրսևորումներով՝ հուշեր և խաղիկներ, դպրոցական կյանքի վերաբերյալ զանազան բանաձևումներ, ճակատագրի կանխագուշակման խաղեր, հարցարաններ և այլք: Կենտրոնական տեղում էր հենց «հուշ» կոչվող ժանրը, որի բնագրերը սովորաբար երկուսից մինչև վեց տողից բաղկացած, հանգավորված տեքստեր էին՝ ժողովրդական ավանդական խաղիկներ հիշեցնող, որոնք մտապահվում էին, արտագրվում այլ հուշատետրերից, գրվում համադասարանցիների կողմից: Աղջկական հուշատետրերի ավանդույթը թեև այսօր նույնպես կարծես թե շարունակվում է, սակայն շատ տարբերվում է նախորդ դարավերջի նմանատիպ դրսևորումներից:

Գրավոր բանահյուսության այս տեսակը բավական ուսումնասիրված է օտարազգի տեսաբանների աշխատություններում: Այն սովորաբար որակվում է որպես պոստֆոլկլոր կամ ենթամշակույթ (Նեկյուդով): Ինչպես ժամանակակից բանահյուսության շատ տեսակներ, այնպես էլ հուշատետրային բանահյուսությունը, հայկական իրականության մեջ առ այսօր ուսումնասիրության առարկա չի դարձել: Անշուշտ, աղջկական հուշատետրերի այս մշակույթը միայն քաղաքին չէ, որ բնորոշ է. այն տարածված է եղել նաև գյուղական միջավայրերում, սակայն ըստ ամենայնի, գրավոր բանահյուսության մյուս դրսևորումների պես, քաղաքից է անցել գյուղեր: Մեր ուսումնասիրությանը որպես հիմնական նյութ են ծառայելու 20-րդ դարի 80-90-ականներին Երևանում ստեղծված հուշատետրեր, ինչպես նաև տարբեր բանասացներից գրառված վկայություններ այս ենթամշակույթի վերաբերյալ: Այս սերնդի դպրոցականներն այսօր հասուն կանայք են, որոնցից ոմանք դեռ սիրով պահպանում են իրենց դպրոցական հուշատետրերը:

Չեկույցում կդիտարկվեն այս հուշատետրերի կենցաղավարման ժամանակաշրջանն ու միջավայրը, հուշատետրային բանահյուսությանը բնորոշ առանձնահատկությունները, կդիտարկվեն հուշատետրերի կառուցվածքն ու բովանդակությունը, ժանրային և թեմատիկ դրսևորումները: Քննության առարկա

կղաճան նաև հուշատետրային բանահյուսության պոետիկան, ավանդական խոսքին բնորոշ դրսևորումները, դպրոցական տարիքային հոգեբանության բանահյուսական արտահայտումները:

ՀԱՅԿՈՒՀԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հայկուհի Մուրադյանը մշակութային մարդաբան է: 2013 թ.-ից դասախոսում է ԵՊՀ-ի Մշակութաբանության ամբիոնում: Նրա սկստեմիական հետաքրքրությունները վերաբերում են քաղաքականության մարդաբանությանը, մշակութային քաղաքականությանը և ժառանգության ուսումնասիրությանը:

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԸ ԲԱՂԱԲԱՅԻՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԽՈՍՈՒՅԹՈՒՄ՝ ԱԲՈՎՅԱՆ ԲԱՂԱԲԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱԼԱՏԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Չեկուցումը նվիրված է խորհրդային մշակույթի պալատի՝ որպես քաղաքային նոր մշակույթի ձևավորման և տարածման կենտրոնի քննարկմանը: Չեկուցման ընթացքում կներկայացվեն մշակույթի պալատի՝ որպես քաղաքային մշակույթի ձևավորման հիմնական կենտրոններից մեկի ձևավորումը, կայացումն ու գործունեությունը: Մասնավորապես կդիտարկվի Աբովյան քաղաքի մշակույթի պալատի դերը քաղաքի ձևավորման համատեքստում (1963 թ.): Մշակույթի պալատի գործունեության հետ կապված մարդկանց հիշողությունները բազմաշերտ են, կապված են կյանքի տարբեր փուլերի, տարբեր զգացողությունների հետ: Հարցումները ցույց են տալիս, որ մշակույթի պալատը եղել է բնակիչների համախմբման, ինտեգրման և քաղաքային մշակույթի ադապտացման վայր, որը մի կողմից ձևավորել է մշակութային նոր ընդհանուր արժեքներ (sharing values), մյուս կողմից՝ դարձել է այդ արժեքները տարածող, հանրայնացնող վայր: Այն ներառել է քաղաքային բնակչության բոլոր շերտերը և թիրախային խմբերը՝ սկսած երեխաներից մինչև թոշակառուներ: Քաղաքային մշակույթի պալատը համախմբել է նաև հարակից գյուղերի բնակչությանը: Գյուղից քաղաք տեղափոխվելը, ադապտացվելը, նոր մշակույթը յուրացնելը մասամբ եղել է մշակույթի պալատի միջոցով: Միաժամանակ, գյուղական մշակութային արժեքները ևս հարմարեցվել են քաղաքային մշակույթին: Աբովյան քաղաքի դեպքում կարևոր է դիտարկել նաև քաղաքային բնակչության ձևավորման առանձնահատկությունները. որտեղի՞ց եկավ հիմնական բնակչությունը, ի՞նչ արժեքներ բերեց, ինչպե՞ս ձևավորվեց քաղաքային մշակույթը և այս համատեքստում քննել մշակույթի պալատի՝ որպես քաղաքային կյանքը կազմակերպող կառույցի դերը և նշանակությունը: Չեկուցման ընթացքում կքննարկենք ոչ միայն այն ծրագրերն ու նյութերը, որ ստեղծվել է մշակույթի պալատի ներսում, այլև այսօր դրանց մասին ունեցած մարդկանց հիշողությունները: Հետազոտությունը անցկացվել է Աբովյան քաղաքում: Այն հիմնված է խորացված հարցազրույցների, դիտարկման մեթոդների և արխիվային նյութերի համալիր կիրառման վրա: